№ 5 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 9 — 1908 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 9 № 5

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

քաղաքական եւ գրականական լրագրի

ՆԵՐԿԱՅ 1908 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(36-րդ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի:

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն):

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մանկավարժուհի Սոֆիա Զաքարեան Խլղաթեանը, Նունէ Զաքարեան Ասլանեանը և Վառվառէ Զաքարեան Տէր-Յովհաննիսեանը ցաւօք սրտի յայտնում են իրանց ազգականներին և բարեկամներին իրանց սիրելի և անմոռանալի մօր՝

ԵՓԻՄԻԱ ՍԱՐԳՍԵԱՆ ԽԻՋԱՆԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 7-ին: Ամբիծքը կը կատարվի չորեքշաբթի, յունվարի 9-ին, երեկոյեան ժամը 6-ին: Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ հինգշաբթի, յունվարի 10-ին, առաւօտեան ժամը 10-ին հանգուցեալի բնակարանից (Վելեամինօվսկայա փող. № 14, տ. Եղիազարեանցի) դէպի Մուղնու ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Վերայի հայոց գերեզմանատանը:

(9 10) 2—1

Վաղը, հինգշաբթի, յունվարի 10-ին,

Աննա Յովհաննիսեան

ՂՈՒԿԱՍԵԱՆՑԻ

մահվան քառասունքի առիթով, Թիֆլիսի հայոց Վանքի Մայր տաճարում տեղի կունենայ պատարագ և հոգեհանգիստ:

Հոգեհանգստի սկիզբը 11½ ժամին: 1—1

„ԳԵՂՈՒՆԻ“

Թիֆլիսի Կենտրօնական Նպաստամատոյց Յանձնաժողովը յայտնում է, որ ի նպաստ Կովկասի հայ սովեալների նուիրված ԳԵՂՈՒՆԻ շքեղ և պատկերազարդ հրատարակութիւնից, որի մասին անցեալ տարի լրագիրներում յայտարարվեց, մնացել են մօտ 200 օրինակ. ուստի ով կամենում է և սովեալներին օգնել և ունենալ իր սեղանի համար մի գեղեցիկ և շքեղ զարդ, թող շտապէ գնել ԳԵՂՈՒՆԻ, որի արժէքն է 4 ր., և 50 կ. պօստի ծախք: Ցանկացողները պէտք է դիմեն Յանձնաժողովի գործավար Ս. Եսայեանին, խմբագրութիւն «Մշակի»:

առ. (Հ.) 5—1

Սրանով տեղեկութիւն է տրվում, որ այս յունվարի 10-ից վաճառականական աւագի կամերան, առևտրի ու մանուֆակտուրայի կոմիտէտները և առևտրական դպրոցի ու վաճառականական ուսումնարանի հոգաբարձական խորհուրդների դիւանատները

ՏԵՂԱՓՈԽՎՈՒՄ ԵՆ

նոր շէնութեան մէջ—Արմեանսկի բազարում, քաղաքային վարկային ընկերութեան տանը, վերին յարկում, բօրսայի կողքին. մուտքը ընդհանուր:

առ. (9 և 10) 2—1

ՉԸ ՊԷՏՔ Է ՎՏԱՆԳՎԻ

Մենք ասացինք, որ ներկայ 1908 թւականին մեր ժողովրդի առաջ դրված են մի շարք այնպիսի խոշոր խնդիրներ, որոնց վերաբերութեամբ կարևոր է ժողովրդի զանազան խաւերի մասնակցութիւնը և գործակցութիւնը:

Սակայն, որպէսզի ժողովուրդը կարող լինի սրբութեամբ և հարազատութեամբ կատարել իր վրա դրված պարտականութիւնները, անհրաժեշտ է, որ նա ազատ լինի իր գործողութիւնների մէջ և կարող լինի բացարձակ ասել այն, ինչ որ նա ցանկանում է, ընտրել նրան, որին նա իսկապէս հաւատում է, կարգաւորել իր կեանքը այնպէս, ինչպէս որ յիրաւի նպատակայարմար է տեսնում:

Ժողովրդական բուէի ազատութիւն և անձեռնմխելիութիւն—ահա ինչի է յանգում ժողովրդի ձգտումը՝ տէր ու տնօրէն լինելու իր գործերին:

Եւ մեզնից իւրաքանչիւրը պէտք է ձգտէ, որ ժողովրդի համար ապահովված լինի նրա կամքի անխարդախ արտայայտութիւնը և գործադրութիւնը:

Մի տեղում ժողովուրդը պէտք է ընտրէ պատուիրակներ կաթողիկոսական ընտրութեան համար, միւս տեղում նա պէտք է ընտրէ հոգաբարձական կազմ իր դպրոցների համար, մի երրորդ տեղում նա պէտք է ընտրէ լիազօրներ հացի մատակարարութեան և սերմացու ձեռք բերելու համար, մի չորրորդ տեղում նա պէտք է ընտրէ զանազան պաշտօնեաներ թէ մշտական և թէ ժամանակաւոր գործերի համար: Այդ բոլոր դէպքերում պահանջվում է, որ ժողովուրդը ազատ լինի ճնշումներից, որ կողմից էլ նրանք գալիս լինեն, արդեօք՝ տեղական ազդեցիկներից, կեղեքողներից, վաշխառուներից, թէ քաղաքական կուսակցութիւններին պատկանող գործակալներից:

Եթէ ժողովրդական բուէն ճնշման տակ է և հնարաւորութիւն չունի ազատօրէն արտայայտվել, այն ժամանակ հասարակական գործերը սկսում են իրանց վարկը կորցնել ժողովրդի աչքում և նրանք սկսում են կամաց-կամաց թուլանալ և մոռացութեան մատնվել:

Ժողովրդական բուէի վտանգումը ժողովրդի հասարակական գործունէութեան վտանգումն է:

Ժողովրդական բուէի հետ խաղացողը կարող է րօպէական աջողութիւն ձեռք բերել մի երկու որոշ դէպքերում. բայց նա դրանցով խեղդում է ժողովրդական ինքնագործունէութիւնը և դատապարտում նրան մեռելութեան:

Մեզնից իւրաքանչիւրը պէտք է ամէն կերպ ձգտէ զարգացնել ժողովրդի ինքնագործունէութիւնը և սովորեցնել նրան ինքնուրոյն աշխատանքով ու հարազատ վերաբերմունքով առաջ տանել իր հասարակական կուլտուրական գործերը: Միայն անխարդախ, ճնշումներից ազատ, ինքնուրոյն գործունէութեան մէջ կարող է ժողովուրդը ամրանալ, ուժեղանալ և ապահով զարգանալ:

Մեր ժողովրդական մասսաները տանջվում են ամէն տեսակ մեծ ու ու փոքր ճնշումներից և չեն կարողանում օգտվել նաև այն իրաւունքներից, որ նրանք ունեն իրանց ներքին գործավարութեան համար:

Բարեխիղճ ինտելիգենտ գործողների պակասութիւն կայ ժողովրդական շրջաններում, գործողների, որոնք գիտակցութիւն մտցնէին ժողովրդի մէջ իր հասարակական պարտաւորութիւնների վերաբերութեամբ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրմիա, 18 դեկտ.

Վերջապէս եկան սահմանների հարցը կարգադրող լիազօրները: Պարսից կողմից Մօհտաշիմ-ը Սալթանան մի շաբաթ առաջ ահագին դիմաւորողներով մտաւ քաղաք, իսկ Թիւրքաց կողմից Թահար-փաշան Բաշ-Կալէից Սալմաստի վրայով անցաւ երէկ յայտնի Մաւանա ասորական գիւղը (այժմ բնակիչներից թափուր), ուր, յիշեալ գիւղի գրաւման օրից, օսմանեան մի քանի պաշտօնեաների և մասնակի զօրքի բանակատեղն է:

Երկու կողմի լիազօրների միջև տեսակցութիւն չէ եղել տակաւին:

Թահար-փաշայի որդին այսօր քաղաք է եկել Մօհտաշիմ-ը Սալթանային տեսնելու և երկու կողմի տեսակցութեան ժամադրավայրը որոշելու:

Շրջանկատ մարդիկ, որքան որ լաւատես չեն սահմանային խնդրում պարսիկներից գրաւած հողը պարսիկներին թողնելու, բայց և այնպէս սպասում են լիազօրների մերձաւոր բանակցման գոհացուցիչ վերջաւորութեան:

Բանակցութեան անաջող հանգամանքում մենք հանդիսատես կը լինենք մին քան զմիւսն ձախորդ տեսարանների...

Ճանապարհների անապահովութեան և դադարած երթևեկութեան պատճառով, կենսական պիտոյքները աւելի էլ թանգացան:

Արգար Տէր-Եսայեան

Թաւրիզ.—Պրինց Ֆէրման-Ֆէրման Սօվուջ-Բուլաղից դիմեց Թաւրիզ՝ զինւորական և դրամական օգնութիւն ձեռք բերելու համար, յայտարարելով, որ նա հազիւ կարող է չորս օր միայն պաշտպանվել: Թաւրիզ հեռագրաթելերը կտրված են:

Թէհրան.—Յունվարի 3-ին աղասէիդ-Մահմէդը մէջլիս բերեց վերջերս միայն բանտից դուրս եկած Ռահիմխան Չելեբիան-օղլուն, որ Թէհրանում աչքի ընկնող անձերից մէկն է: Սա մի ճառ արտասանեց թուրքերէն լեզուով, որ թարգմանեց պատգամաւորներից մէկը: Այդ ճառով նա յիշատակեց իր մատուցած նախկին ծառայութիւնները քիւրդերի դէմ տեղի ունեցող կռիւների մէջ և խնդրեց՝ թոյլատրել իր սեփական միջոցներով մի զօրախումբ կազմել՝ պաշարված Սօվուջ-Բուլաղը ազատելու համար: Օգտվելով ճառի յարուցած խանդավառութիւնից, սէիդ-Աբդուլլան խնդրեց՝ ազատել Սալարին—Ուֆա-խանին:

Աստրաբադից շարունակ հեռագիրներ են ստացվում, որոնցով խնդրվում է զօրքեր ուղարկել:

Պետերբուրգ.—Վերջին օրերս արտասահմանեան մամուլում, ինչպէս և Թէհրանում, լուրեր են տարածվում, որ իբր ռուսական մեծ զօրաբաժիններ են կենտրօնանում Ջուլֆայում: Այդ տեղեկութիւնները ճիշտ չեն. Ներկայումս ռուսական Ջուլֆայի շրջանում, որ ներկայացնում է Անդրկովկասի և Ատրպատականի հաղորդակցութեան գլխաւոր կէտը, բանակ են դրել միայն Ումանի գնդի վեց հարիւրեակ կօզակներ:

Այդ միջոցը հետամուտ է ոչ մի այլ նպատակի, բացի սոսկ այն գիտումի, որ Ռուսաստանը պահպանէ իր սահմանը և միջազգային բնականօրէն, երբ անհրաժեշտ կը լինի. պահպանէ ռուսահպատակ բազմաթիւ հաստատութիւնները պարսկական հողեան շրջանում, ուր չէ դադարում իրերի խառնակ վիճակը, որի պարզ ապացոյց կարող է ծառայել հէնց վերջերս տեղի ունեցած Ատրպատականի ռուսաց հիւպատոսի նամակատարի սպանութիւնը:

Սակայն, չը նայած այդ հանգամանքներին, Ռուսաստանի կողմից պատերազմական ոչ մի ակտիվ միջոց չէ եղել պարսից հողի վրա: Միայն Թաւրիզի գեներալ-հիւպատոսարանի կօզակների թիւը վերջին օրերում աւելացվեց 25 մարդով՝ ինչպէս հիւպատոսարանը, այնպէս և այդ քաղաքի միւս ռուսական հաստատութիւնները պաշտպանելու համար:

Լոնդոն.—Առաւօտեան, ընտրողական իրաւունքի ձգտող կանայք ցոյց սարքեցին մինիստր-նախագահի պալատի առաջ, ուր մտադրութիւն կար գումարել մինիստրների խորհրդի նիստը: Որպէսզի նախօրօք պալատի մօտերը նշանակված ոստիկաններին շփոթութեան մէջ ձգեն, կանայք պալատին մօտեցան կառքերով:

Հէնց որ ֆինանսների մինիստր Ասկվիթը մօտեցաւ, սուֆրաժիստկաները (բուէ պահանջողները) յարձակվեցին նրա վրա, բայց ոստիկանութիւնը նրա առաջը կտրեց: Կանանցից մի քանիսը կապեցին իրանց պալատի դիմաց գտնվող ցանկապատի շղթաներով և պոռալով ու բարձր աղաղակներով ընտրողական իրաւունքներ պահանջեցին: Ոստիկանութիւնը նախ ստիպված եղաւ ազատել նրանց շղթաներից, իսկ յետոյ հեռացնել:

Կանանցից մէկը ոյժով ներս ընկաւ մինիստր-նախագահի բնակարանը, բայց նոյն րօպէին դուրս բերվեց դռնապանների ձեռքով: Ոստիկանութեանը աջողվեց շուտով ցրել ցուցարարուհիներին. հինգ կին ձերբակալվեցին: Նրանցից պահանջվում է կամ ստորագրութիւն տալ, որ այսուհետև ոչ մի անկանոն քայլ չեն անի և իրանց կարգին կը պահեն, կամ երեք ամիս բանտ նստել: Մեղաւորները գերադասեցին բանտարկութիւնը: («К.»)

Թաւրիզ.—Յունվարի 4-ի առաւօտեան, կուսակցական երկպառակութիւնների հողի վրա, զինված ֆիդայիները գնդակահարեցին Դավաչու կայարանը: Բռնկվեց ուժեղ հրացանաձգութիւն, որ շարունակվեց անընդհատ մինչև երեկոյ: Կան սպանվածներ և վիրաւորվածներ:

Յունվարի 5-ին բոլոր թաղերում շուկաները բաց էին: Շարունակ զինված խմբեր են ժողովվում անջումանում. դրութիւնը յուզալից է. նոր ընդհարման հոտ է փչում:

Պարիզ.—Ձերբակալվեցին տերրօրիստներ Մայէր Բալատը և Ֆէննի Եամպօլսկայան, որ Պարիզ էին ուղարկված սաղացնելու 1907 թ. յուլիս ամսում Թիֆլիսում յափշտակված փողերը:

Մինխէն.—Յունվ. 5-ին այստեղ ձերբակալեցին մի ռուս կնոջ, որ հրաժարվեց ասելու, թէ որտեղից է ձեռք բերել իր մօտ եղած բանկի տոմսը: Պարզվեց, որ Թիֆլիսում յափշտակված փողերից մի հինգ հարիւրանոց արդէն մանրել են Մինխէնի բանկերից մէկում: Խուզարկութեան ժամանակ ձերբակալված կինը շտապով պատռեց ռուսերէն լեզւով գրված նամակը: Նամակի մէջ ասված էր, որ շուտով Պարիզից Մինխէն են գալու նրա երկու ընկերները:

Իսկոյն հսկողութիւն սահմանվեց, մասնաւորապէս գլխաւոր կայարանում: Ցերեկվայ ժամը 2-ին ձերբակալվեցին Պարիզից Լէքսպրեսով եկած երկու հոգի: Նրանցից մէկի մօտ, որ ցոյց էր տալիս իրան իբրև պարիզեցի, բացի գերմանական և ֆրանսիական խոշոր գումարներից, գտնվեցին Թիֆլիսում յափշտակած փողերից 17 հատ հինգհարիւրանոցներ: Միւսի մօտ, որ իրան անուանեց ռուս, կովկասցի, գտնվեցին կրկին մեծ քանակութեամբ թղթադրամներ: Պարզվեց նոյնպէս, որ եկւորները հինգհարիւրանոցներ մանրացրել են նաև Պարիզից Մինխէն գալիս, ճանապարհին: Ձերբակալվածները ասում են, որ արժեթղթերը նրանց նուէր է տուել մի անյայտ պարոն: («К.»)

Պետերբուրգ.—Ժողովրդական լուսաւորութեան նոր մինիստր Շվարցը երկար տեսակցութիւն ունեցաւ Կաուֆմանի հետ: Շվարցը աւտոնօմիայի կողմնակից է, իսկ քաղաքական հայեացքներով՝ անկուսակցական [illegible]:

Ժողովրդական ազատութեան կուսակցութեան Մոսկվայի կոմիտէտի դէմ քննութիւն է բացված ապօրէն ժողովներ գումարելու առիթով:

(«Кас.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԲՕՐՍԱՅԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԲԱՑՈՒՄԸ

Երէկ, յունվարի 8-ին, Թիֆլիսում ցերեկով տեղի ունեցաւ Թիֆլիսի բօրսայի բացումը:

Ներկայ էին բօրսային ընկերութեան և բօրսային կոմիտէտի անդամները, ֆինանսների մինիստրութեան ներկայացուցիչը, քաղաքագլուխը, նահանգապետը, զանազան ընկերութիւնների և մամուլի ներկայացուցիչները և ուրիշ հիւրեր:

Մաղթանքից յետոյ, որ կատարվեց թէ քրիստոնէական ծիսակատարութեամբ և թէ մահմեդական հոգևոր ներկայացուցչի օրհնութեամբ, բօրսային կոմիտէտի նախագահ Գ. Ղամբարեան խօսեց մի ճառ, առաջ բերելով բօրսային խնդրի զարգացման պատմութիւնը Թիֆլիսում և բօրսայի նշանակութիւնը առհասարակ վաճառականութեան համար: Ճառի մէջ ասված էր, որ Թիֆլիսում բօրսա հիմնելու միտքը ծագել էր դեռ քառորդ դար սրանից առաջ, բայց նա պաշտօնական ընթացք ստացաւ նախկին առևտրական աւագ Յ. Շաղինեանի օրով, իսկ վերջնական հաստատութիւն ստացաւ ներկայ աւագ Ա. Մելիքովի օրով և նրա ջանքերով: Բօրսան կոչված է օգնելու վաճառականութեանը թէ մշտական խորհրդակցութիւններով և մթերքի փոխանակութեամբ, թէ գների ամենաամրապինդ տեղեկատու ցուցակներով և կրեդիտի ու ապրանքների վաճառահանութեան դիւրացումներով:

Քաղաքագլուխ Չերքեզով յայտնեց, որ Թիֆլիսում բօրսան աւելի ուշ է բացված, քան Ռուսաստանի և Եւրոպայի աւելի անշան կենտրօններում: Նա յոյս ունի, որ բօրսան մեծ ծառայութիւն կը մատուցանէ կովկասեան վաճառականութեան զարգացման:

Այնուհետև հանդիսականները մօտեցան սուրճի սեղանին և այդտեղ շարունակւեցին ճառախօսութիւնները:

Նահանգապետ Լօղինօ-Լօղինսկին առաջարկեց Թագաւոր-Կայսրի կենացը, որը ծածկվեց հուռաներով, և յետոյ շնորհաւորելով բօրսայի բացումը՝ շեշտեց, որ կանոնաւոր վաճառականութիւնը բարիք է տնտեսական կեանքի համար, ինչպէս ներվերը մարդու կազմուածքի մէջ: Նա յոյս յայտնեց, որ առևտրի կանոնաւորումը մեծ զարկ կը տայ տնտեսական կեանքի բարելաւման: Նահանգապետը այնուհետև առաջարկեց կովկասեան Փոխարքայի կենացը:

Ֆինանսների մինիստրութեան ներկայացուցիչ Զաւնկօվսկի ուրախութիւն յայտնեց, որ վերջապէս աջողված է հիմնել բօրսա և նրա միջոցով կարողութիւն է տրվում պարզել առևտրի ու արդիւնաբերութեան դրութիւնը և առաջ մղել նրանց զարգացման խնդիրները:

Պետական բանկի կառավարիչ Բեզօբրազօվ ընդգծեց ֆօնդային բօրսայի նշանակութիւնը և ցանկութիւն յայտնեց, որ Թիֆլիսի բօրսան կարող լինի զարգացնել այդ մասը, որ շատ կարևոր է Կովկասի համար:

Քալանթար գիւղատնտեսական ընկերութեան կողմից յայտնեց, որ արդիւնաբերութեան զարգացումը մեծ կախումն ունի վաճառահանութիւնից և շուկայից: Գիւղատնտեսական ընկերութիւնը շատ տարիներ զբաղվել է արդիւնաբերութեան խնդիրներով, բայց չէ կարողացել հեղինակաւոր կերպով մշակել արդիւնքների վաճառման խնդիրները. իսկ այս վերջիններից կախված է մեծապէս և առաջինների աջող լուծումը:

Խատիսեան խօսեց Թիֆլիս քաղաքի տնտեսական զարգացման մասին և ցանկութիւն յայտնեց, որ Թիֆլիսը սպառողի դերից անցնէ արդիւնաբերողի դրութեան, զարգացնելով մանուֆակտուրայ ձեռնարկութիւնները:

Վերմիշեան առանձին նշանակութիւն է տալիս այն բանին, որ առևտրա արդիւնաբերական դասակարգը սկսում է կազմակերպվել և այդպիսով հասարակական ոյժ ձեռք բերել կուլտուրական դեր կատարելու տնտեսական զարգացման գործի մէջ:

Շոգենաւային ընկերութիւններից մէկի ներկայացուցիչը խօսում է այն դիւրութիւնների մասին, որ կը ստանայ ապրանքների տեղափոխութիւնը բօրսայի միջոցով:

Կազիօննի պալատի կառավարիչը ուրախութիւն է յայտնում, որ բօրսային մասնաժողովի գլխին կանգնած է մի այնպիսի հմուտ անձ, ինչպիսին է պ. Ղամբարեան, և առաջարկում է նրա կենացը:

Այնուհետև նախագահը շնորհակալութիւն է յայտնում հիւրերին և վերջանում է հանդէսը:

Ա. Ք.

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂ. ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Երկուշաբթի, յունվարի 7-ին, Թիֆլիսի քաղաքային դուման իր նիստի մէջ քննեց հետևեալ հարցերը.

1) Դումայի նախկին քարտուղար Ս. Չրելաևլին կենսաթոշակ յատկացնել իր 25-ամեայ ծառայութեան համար:

2) Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարի ընտրութիւնը:

3) Կովկասեան ապագայ պօլիտեխնիկումի կամ համալսարանի շինութեան համար 200 դեսեատին հող յատկացնել:

Առաջին հարցի վերաբերմամբ վարչութիւնը որոշումն էր կայացրել՝ առաջարկել դումային նշանակել Չրելաևլին կենսաթոշակ տարեկան 2000 ռուբլի, ի նկատի ունենալով, որ Չրելաևը ծառայում է քաղաքային ինքնավարութեանը 1882 Թւից ի վեր և անգին ծառայութիւններ է մատուցել:

Թէր և դէմ վիճաբանութիւններից յետոյ դուման որոշեց գաղտնի քուէարկութեամբ նշանակել Չրելաևլին կենսաթոշակ 1500 ռուբլի:

Քաղաքագլխի պաշտօնակատարի պաշտօնի համար Թերթիկներով Թեկնածուներ առաջարկվեցին վարչութեան անդամներ՝ իշխան Ա. Մ. Արղութեան և Ալ. Խատիսեան: Առաջինը հրաժարվեց քուէարկվելուց, ուստի գաղտնի քուէարկութեամբ ընտրվեց Ալ. Խատիսեանը 43 ձայներով ընդդէմ 8-ի:

Երրորդ հարցը, այն է պօլիտեխնիկումին 200 դեսեատին հող յատկացնելու հարցը, երկարատև վիճաբանութիւնների առարկայ դարձաւ:

Քաղաքագլուխ Չերքեզովի զեկուցումից երևաց, որ դեռ 1890 Թւին Թիֆլիսի դուման, արծարծելով բարձր կրթական հաստատութիւն բանալու միտքը, որոշել էր 100,000 ռուբլի նուիրել, եթէ Թիֆլիսում հիմնվի համալսարան, և հարկաւոր գետինը՝ շինութեան համար: Ապա, 1894 Թւին, մի նոր որոշումն կայացրեց, որ Թիֆլիսում բացվի պօլիտեխնիկում, լեռնա արդիւնաբերական և գիւղատնտեսական բաժանմունքներով, և յատկացրեց նրա շինութեան համար 200 դեսեատին գետին, բացի վերոյիշեալ 100,000 ռուբլի գումարից: 1897 Թ. դուման նորից յարուցեց միջնորդութիւն այդ մասին և հրաւէր կարդաց Կովկասի միւս քաղաքներին ևս նուէրներ սահմանել և պօլիտեխնիկումի բացումը իրագործել: Բացի դրանից 1898 Թ. դուման որոշեց նաև տարեկան 30,000 ռուբլի նպաստ տալ պօլիտեխնիկումի պահպանութեան համար: 1900 Թ. նորից զարթնեց այդ խնդիրը, երբ Վրաստանը Ռուսաստանի հետ միացման հարիւրամեակի տօնախմբութիւնների առիթով քննվում էր այն հարցը, թէ ինչպէս յաւերժացնել այդ դէպքը, և դուման որոշեց, բացի տարեկան 30,000 ռ. նպաստից, միանուագ դարձեալ 30,000 ռ. յատկացնել:

Սակայն, չը նայելով այդ բոլոր միջնորդութիւններին, խնդիրը մնում էր անլուծելի: Վերջապէս 1906 Թ. հայ-Թուրքական համագումարի ժամանակ Թիֆլիսում պօլիտեխնիկում բանալու հարցը նորից արծարծվեց, և Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվը, համակրութեամբ վերաբերվելով, կարգեց մի մասնաժողով այդ հարցի բազմակողմանի քննութեան համար, մասնակցութեամբ զանազան վարչութիւնների և քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչների և մի քանի մասնաւոր անձանց:

Բացի դրանից Փոխարքան Թոյլատրեց հանգանակութիւն բանալ ամբողջ Կովկասում: Այդ մասնաժողովը ընտրեց մի առանձին ուսումնական ենթամասնաժողով, Սարատօնօվի նախագահութեամբ, որին յանձնեց մշակել բարձր կրթական հաստատութեան այն տիպը, որ ցանկալի է երկրի համար: Ենթամասնաժողովը, խորհրդակցութեամբ զանազան պրոֆէսօրների և ձեռնհաս անձանց, անհրաժեշտ գտաւ հաստատել Թիֆլիսում կովկասեան համալսարան երկու ֆակուլտետներով — բնագիտական և ֆիզիկօ-մաթեմատիքական — հետևեալ բաժանմունքներով, այն է բնագիտական ֆակուլտետին կից՝ երեք տեխնիքական բաժանմունք — մեքենական, քիմիական և գիւղատնտեսական: Ենթամասնաժողովի հաշուով այդ համալսարանի շինութեան համար հարկաւոր կը լինի 2,000,000 ռուբլի, իսկ ամեն տարի նրա պահպանութեան համար՝ 380,000 ռուբլի: Ենթամասնաժողովի այդ որոշումն հաւանութիւն գտաւ Փոխարքայի կողմից, որը ներկայացրեց և Բարձրագոյն հաճութեան, և, ինչպէս վերջերս հրատարակվեց «Кавказ» լրագրում, Թագաւոր Կայսրը իր հաճութիւնն է տուել և ցանկութիւն յայտնել, որ Փոխարքայի յարուցած հարցը շուտափոյթ լուծումն ստանայ: Ուրեմն յոյս կայ, որ կովկասեան համալսարանի բացման հարցը շուտով լուծվի: Մինչև այսօր միանուագ նուէրներ եղել են 23,167 ռ., իսկ զանազան քաղաքներ և հասարակական հիմնարկութիւններ խոստացել են յատկացնել միանուագ 255,000 և տարեկան 90,000 ռուբլի: Մասնաժողովը գտել էր, որ Թիֆլիս քաղաքի խոստացած 200 դեսեատին գետնից 50 դեսեատինը շատ և շատ բաւական է համալսարանի շինութիւնների համար, իսկ մնացած 150 դեսեատինը կարելի է ծախել և գումարը յատկացնել շինութեան: Ենթադրվում է, որ այդ 150 դեսեատին գետնից կը ստացվի 800,000—1,000,000 ռուբլի. մնացած մի միլիօնը, որ հարկաւոր է շինութեան համար, գուցէ կարելի լինի հաւաքել հանգանակութեամբ:

Զեկուցանելով այս ամենը, քաղաքագլուխը առաջարկեց դումային լուծել 200 դեսեատին գետին տալու հարցը:

Երկար վիճաբանութիւններից յետոյ, դուման որոշեց. 1) յատկացնել կովկասեան համալսարանի շինութեան համար 50 դեսեատին գետին Նաւթլուղի հողերից. 2) յատկացնել նոյն տեղում մնացած հողերից 150 դեսեատին, որը ծախել մաս-մաս և արժէքը տալ շինութեան համար, այն պայմանով, որ Թիֆլիս քաղաքը եթէ հարկաւոր համարէ՝ կարող է դրամ տալ այդ հողի փոխարէն, 800,000 ռուբլուց սկսած մինչև 1,000,000, և եթէ 10 տարվայ ընթացքում համալսարանը չը բացվի, բոլոր նուէրները, թէ դրամ և թէ գետին, յետ են դարձվում քաղաքին:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Այս տարվայ առաջին հայկական ներկայացումը սկսվեց ինքնուրոյն պիէսով: Դա Նար-Դոսի «Սպանված Աղաւնի» դրաման է չորս գործողութեամբ:

Նրա համառօտ բովանդակութիւնը հետևեալն է: Երիտասարդ Գարեգինը (Զարիֆեան) նշանվել է օրիորդ Սառայի (Մայսուրեան) հետ: Գարեգինը մեղմ բնաւորութեամբ, դիւրահաւատ, անփորձ մի երիտասարդ է: Սառան՝ կամքի տէր, հոգեկան յուզմունքներ կրած մի կանացի անձնաւորութիւն: Սառան ունեցել է մի տխուր «անցեալ», որի մասին նա ինքը յայտնում է Գարեգինին պսակվելուց յետոյ, երբ այդ անցեալի հերոսը, Թուսեան (Մամիկոնեան) անունով մի պարոն, նորից հանդէս է գալիս այն շրջանում, ուր գտնվում է Սառան: Թուսեանը փչացած, ոչ մի բարոյական սկզբունք չը ճանաչող մի անձն է, որը թափառում է ուրիշների հաշուով, այս ու այն տեղ Թրև գալով: Սառան իր տանջանքների և խոր վշտի մէջ կատաղութեան հասած միայն մի մտածմունք ունի—վրէժ առնել իրան խաբող և դժբաղդացնող սրիկայից: Նա գրգռում է Գարեգինին՝ սպանել Թուսեանին, բայց երբ այդ չէ աջողվում, ինքն է վերցնում իր վրա իր վճռի իրագործումը և, դեռ չը հասած իր նպատակին, խելագարվում է:

Այդ բոլորը կատարվում է Գարեգինի ծանօթ Մարգարեանի (Յարութիւնեան) և Սառայի ծնողներ՝ Բաղիրեանների (Վրոյր և տիկին Զամուկեան) տանը:

Պիէսի մէջ համեմատաբար քիչ է գործողութիւն, բայց ստեղծած դիրքերը և խօսակցութիւնների դասաւորութիւնը դարձնում են նրան հետաքրքրական: Հանդիսականը լսում է պիէսը ուշադրութեամբ:

Տիպերը որոշ չեն գծագրված և նրանց տեղ դեր են կատարում բնաւորութիւնները, քարակտերները: Ովքեր են դրամայի գործողները, ինչ կապ ունեն կեանքի հետ և ինչ հողի վրա են կանգնած՝ չէ երևում պիէսից. միայն այնքանն է յայտնի, որ գործողութեան տեղը Թիֆլիսն է:

Ամենաուժեղ տեսարանը վերջին տեսարանն է, որտեղ դրամայի հերոսուհին ցոյց է տալիս հոգեկան տանջանքների մի փոթորիկ: Եւ տիկին Մայսուրեան այդտեղ մեծ կորով և հոգեբանական ուժեղ շեշտաւորով ներկայացրեց Սառային իր տանջանքների և խելագարութեան հասցնող յուզմունքների մէջ: Այնուամենայնիւ այդ տեսարանը մի կողմից Թերատ, իսկ միւս կողմից ձգձգված տպաւորութիւն է գործում:

Անցնելով առանձին դերերին՝ պէտք է ասենք, որ փոքր ի շատէ որոշ գծագրված են Թուսեանի և մասամբ Սառայի դերերը: Իսկ ո՞վ է և ի՞նչ է ներկայացնում Մարգարեանը—դժուար է ասել: Պիէսում ասված է, որ նա պարապվում է գրականութեամբ, բայց նրա դերից ոչ մի կերպ չէ կարելի այդպիսի մի բան եզրակացնել: Ի՞նչ է Բաղիրեանը. արդեօք նա գիտէ՞ իր աղջկայ՝ Սառայի դրութիւնը, արդեօք նրա սատծները անկե՞ղծ են թէ՞ միայն քաղաքականութիւն: Ի՞նչ է Գարեգինը, ի՞նչ գործի և հասկացողութիւնների տէր է—բաւական անորոշ է:

Այդպիսով Նար-Դոսի պիէսը, ներկայացնելով հետաքրքրական բեմական մի պիէս, կարօտ է բարեփոխութիւնների իր մի քանի մասերում:

Դերասանները ընդհանուր առմամբ բարեխղճութեամբ էին վերաբերվել իրանց գործին:

Հասարակութիւնը վարձատրեց գլխաւոր դերակատարներին բուռն ծափահարութեամբ:

Պիէսի հեղինակը բացակայ էր: Նա Թիֆլիսում չէ:

Սերող

ԹՈՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

«Մշակի» խմբագրութիւնը 1907 Թ. մայիսի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ը ստացել է ի նպաստ Հայաստանի սովեալների ընդամենը 2771 ռուբլի 5 կոպէկ և 200 ֆրանկ: Այդ գումարից նա ուղարկել է. 1) Կ. Պօլիս՝ պատրիարքի միջոցով Նպաստից Սնդուկին 1000 ռ., 2) յանձնել է Հանգանակիչ Մասնաժողովին 153 ռ. 83 կ. և 200 ֆրանկ, 3) պօստի ծախք է եղել 2 ռ., 4) առ 31-ն դեկտեմբերի 1907 Թ. մեզ մօտ մնում էր 1615 ռ. 22 կոպէկ: Այդ մնացորդն ևս մենք յանձնեցինք Հանգանակիչ Մասնաժողովի գանձապահ պ. Ա. Սարուխանեանին:

Այս տարվայ յունվարի 1-ից ստացված և այսուհետև ստացվելիք գումարների մասին հետզհետէ նոյնպէս կը տպենք:

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Անցեալ 1907 Թ. ընթացքում, մինչև դեկտեմբերի 31-ը, ստացել ենք 600 ռ. 74 կ.: Այդ գումարը (598 ռ. 99 կ.) ամբողջովին ուղարկել ենք Նոր-Բայազէտի մասնաժողովին, իսկ 1 ռ. 75 կ. պօստի ծախք է եղել:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Շահալի գիւղ (Լօռի), 27 դեկտ.

Մօտ օրերս ստացվեց Կովկասի հողային բարեկարգիչ պարոն լիազորից մի պաշտօնական գրութիւն, որով յայտնվում է Լօռու շրջանի մեղուապահներին, որ կարգադրված է գարնան սկիզբներում ուղարկել մասնագէտներ Լօռու և մասամբ Փամբակի շրջաններում եղած մեղուական փտութիւն (гнилецъ) կոչված հիւանդութեան դէմ կռուելու, որի մասին աշնանը տեղական մեղուապահները հաւաքական ոյժով դիմել էին պ. լիազորի օգնութեանը:

Այս հիւանդութիւնը մօտաւորապէս հինգերորդ տարին է, որ աչքի է ընկնում. արդէն բաւականին տարածված է. նա գտնվում է գլխաւորապէս Ռսիգեառդեառ, Ջալալօղլի և Վօրօնցօվկա գիւղերի շրջակայքում: Հիւանդութեան մասին ճիշտ տեղեկութիւն չը կայ և մանրամասն ուսումնասիրված չէ՝ թէ ինչ տեսակի հիւանդութիւն է, ինչ վիճակի մէջ է գտնվում, ո՞ր գիւղերում և ինչ չափով է տարածված, քանակութիւնը և այլն. ընդհանրապէս պարզ է այն, որ նա օրըստօրէ տարածվում է և լուրջ վտանգ է սպառնում մեղուապահական գործին:

Ուստի հրաւիրում ենք մեր ընկեր բոլոր մեղուապահների ուշադրութիւնը, որպէսզի նրանք նախօրօք պատրաստեն մանրամասն տեղեկութիւններ այդ մասին, և երբ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ՇԱՀԱԶԻԶԻ ՄԱՀԸ

I

Դեկտեմբերի 25-ին, Մօսկվայի հայ գաղութի համար, լաւ օր չը լուսացաւ:

Այդ օրը, իր հետ, բերեց յայտնի գործող Սմբատ Շահազիզի մահվան գոյժը,—մի կորուստ, որ անկեղծ ցաւակցութիւն առաջ բերեց ամեն լսողի մէջ: Ու շատ հասկանալի է: Մարդը 40 երկար ու ձիգ տարի ապրել ու գործել է այդ հասարակութեան մէջ, վայելելով նրա ջերմ համակրանքն ու սէրը՝ մինչև նոյնիսկ իր մահը:

Իբրև բանաստեղծ ու հրապարակախօս, անշուշտ, նա յայտնի էր համարեա ամբողջ հայութեանը. իսկ Մօսկվայի գաղութին, բացի դրանցից, յայտնի էր նաև իբր ընտիր մանկավարժ և անձնազոհ ուսուցիչ, որի ջանքերի պտուղը—30 տարվայ ընթացքում—վայելել է Լազարեան ճեմարանի—հին-Ջուղայեցիների այդ բարձր կոթողի—հայ աշակերտութիւնը: Ու, եթէ այդ բոլորին աւելացնենք և այն հանգամանքը, որ հայ գաղութի ներկայ անդամներից շատերը՝ կամ նրա երբեմնի դասընկերներն են, կամ ժամանակին աշակերտները, ըստ ինքեան հասկանալի կը լինի հանուր տպաւորութեան խորութիւնը:

Թէպէտ վերջին տարիները—չը նայելով իր զուարթ արտաքինին—հանգուցեալը ներքին տկարութիւն էր ձեռք բերել, այնուամենայնիւ նրա մահն անսպասելի էր համարվում, ու նա յանկարծամահ եղաւ, հեռու իր հարազատներից, առանց որևէ վկայի... բնական պարտքը կատարելիս: Բայց մինչև այդ րօպէն՝ նա անքուն գիշերներ էր անցկացրել, յոգնելու չափ, «Շվէյցարիա» հիւրանոցի (որտեղ բնակւում էր վերջին տարին) հեռախօսին դիմելով:

Նրա մահը,—ինչպէս պատմում են ու հանուր կարծիք է,—առաջ եկաւ՝ իր բարեկամութիւնը չարագործողների ձեռքից, նիւթական հողի վրա, մի երևոյթ, որ շարժել է մայրաքաղաքի ողջ գաղութի զայրոյթը:

Պատմում են, որ հանգուցեալը 150,000 ռուբլու կարողութիւն է թողել և թէպէտ կտակ էլ է ունեցել, բայց ստիպված է եղել այն ոչնչացնել, նկատելով վերջին տարիները, որ իրօք իր տրամադրութեան տակ եղած գումարը՝ էլ համապատասխան չէ կտակածին:

II

Յիշված առաւօտը (ս. Ստեփանոսի տօնին), պատարագին սովորաբար 10—15 մարդ է լինում մեր եկեղեցում (ս. Խաչ). բայց այդ օրը հաւաքվեց բաւական ժողովուրդ և կատարվեց առաջին հոգեհանգիստը (դիակն ուրիշ տեղ էր):

Պատարագից յետոյ, ներկայողները մտածում էին հանգուցեալի յիշատակը պատուելու ձևի մասին, և, ամենից առաջ, հանգիստը անելու համար, որոշեցին Թաղումը կատարել կիրակի, ամսիս 30-ին:

Ամսի 26-ին, եկեղեցականութիւնը երկրորդ հոգեհանգիստը կատարեց նրա դագաղի վրա, Լեֆորտօվ կոչված քաղաքամասում, ուր տարել էին նրան՝ անդամահատելու, որ սակայն չէր կայացել՝ մի անձի միջնորդութեան շնորհիւ: Անհասկանալի է, թէ ինչ ժամով կարող էր ունենալ այդ քայլը, քանի որ կասկածներ փարատելու միակ միջոցը՝ անդամահատութիւնն է:

Ինչ և է: Հոգեհանգստից յետոյ, դիակը տարվեց մեր երկրորդ՝ ս. Աստուածածին եկեղեցին, որտեղ ներկայացան մեր եկեղեցու երէցփոխն ու գաղութի անդամներից երկուսը, որոնք, ուրիշ երկուսի հետ միասին (ինչպէս իրանք էին ասում), մօտ 30 տեղ, ինքնաբերաբար, հեռագրով հաղորդել էին բանաստեղծ-հրապարակախօսի մահը: Այդտեղ, երրորդ հոգեհանգիստը կատարելուց յետոյ, վերադառնալով մեր աւագ եկեղեցին, ժամը 2-ին հաւաքվեցինք՝ Թաղման հանդէսի համար նախնական ժողովի:

III

Թէպէտ, ռուսաց տօների պատճառով, տեղական Թերթերը լոյս չեն տեսնում, սակայն, հաւաքվեցին 31 մարդ, որ քիչ չէր, համեմատելով մեր ծխական ժողովների սովորական քանակութեան հետ:

Ներկայ եղողներից ոմանց առաջարկով և հանուրի լուռ համաձայնութեամբ, նախագահ ընտրվեց պրոֆ. Գ. Խալաթեանը, որի առաջարկութեամբ ժողովը յարգեց հանգուցեալի յիշատակը, ոտքի կանգնելով: Յետոյ նախագահը հարց տուեց. կայացած ժողովը կանոնաւո՞ր պէտք է համարել, թէ ոչ: Ձայների բազմութեամբ որոշվեց, որ կանոնաւոր չէ ու չէ կարող համարվել, որովհետև կարևոր ձևականութիւնները չեն կատարվել. իսկ սա ունէր իր յարգելի պատճառը՝ հնարաւորութեան բացակայութիւնը:

Ժողովը պէտք է լուծէր հետևեալ հարցերը. 1) ում հաշուով Թաղվի հանգուցեալը—իր, թէ՝ գաղութի, 2) հանգստարանի ինչ տեղում Թաղվի, 3) ինչո՞վ անմահացվի հանգուցեալի յիշատակը, 4) նրա դագաղի վրա պսակներ (մետաղեայ) դրվեն, թէ ոչ՝ գաղութի կողմից և 5) ճառեր խօսվեն, թէ ոչ *):

Առաջին ու երկրորդ հարցերը լուծվեցին անմիջապէս. Թաղել Մօսկվայի հայութեան հաշուով, և պրոֆ. Ստ. Նազարեանցի ընտանեկան գերեզմանոցին կից, քանի որ դրանք թէ գաղափարակից գործողներ են եղել ու թէ մտերիմ բարեկամներ: Իսկ երրորդ հարցով զբաղվելը վերապահվեց կանոնաւոր ծխական ժողովին, որ կայանալու է Թաղումից յետոյ:

Ինչ վերաբերում է չորրորդ ու հինգերորդ հարցերին, թէև դրանք, մանաւանդ պսակներ դնելու հարցը, ըստ երևոյթին, աննշան հարց էին, սակայն, լինելով սկզբունքային հարց, համարեա երկու ժամից աւելի զբաղեցրին ժողովին:

Դրա առիթով, ամենից առաջ խօսեց այս տողերը գրողը **), միանգամայն դէմ լինելով պսակներ դնելուն, հիմք առնելով այն հանգամանքը, որ դա անաքանդ՝ մի սովորութիւն է, որ սխալմամբ ընդունվել է մեր մէջ, յամառութեամբ գործադրվում, հարուստներից հարիւրներ ու հազարներ խլում, իսկ աղքատներին—նրանց նմանվելու համար—միջից կէս անում, նոյնիսկ պարտքով, պսակներ ձեռք բերել տալով: Յիշեցրեց, որ պսակների դէմ է եղել նոյնիսկ բարձրաստիճան մի եկեղեցական, և նոյնը յորդորել իր ստորադրեալներին՝ ոչ միայն անօգուտ, այլ և վնասակար այդ սովորոյթը վերացնել ձգտելու: Աւելացրեց նոյնպէս, որ մեր Թերթերն էլ յաճախ նոյն միտքն են տարածել:

Գալով ներկայ դէպքին, և մատնանշելով օրական հացի կարօտ՝ Կովկասի ու Թիւրքահայոց սովամահ գաւառները, միանգամայն յանցանք համարեց պսակների վրա գումարներ վատնելը: Միևնոյն ժամանակ կցեց, որ ինչ վերաբերում է ուրիշ տեղերից գալիք պսակներին,—քանի որ հեռագրով նրանց մեր որոշումը յայտնելու յարմարութիւնը չենք ունեցել,—այդպիսիները պարտաւորված կը լինենք ընդունել, և այլն:

Այս առիթով խօսողներից՝ նախագահը, բժ. Ս. Շահ-Նազարեանցը, Արշակ Թումանեանը և այլք՝ պսակ դնելու կողմն էին, առարկելով որ պսակ դնելը յարգանքի մի արտայայտութիւն է, որ մենք առել ենք մեզնից աւելի կուլտուրական ցեղերից: Եթէ նրանք չեն վերացնում, մենք ինչո՞ւ պէտք է վերացնենք, և միթէ՞ հայոց մէջ ընդունված սովորոյթը հէնց Մօսկվայի գաղութը պէտք է վերացնի: Ա. Թումանեանը մի քանի անգամ խօսեց այդ առիթով, շեշտելով որ դէպի ննջեցեալը իրանց յարգանքը արտայայտելու այդ սովորոյթը՝ վաղուց է, ինչ գոյութիւն ունի. ոմանք մոխիր են ցանել իրանց՝ գլուխներին, ոմանք աղօթք սահմանել, ոմանք պսակներ դրել: Բժ. Շահ-Նազարեանցն էլ շեշտեց, որ ամենափառաւոր պսակ պէտք է դնել ու ամենամեծ շքով Թաղել, և այլն:

Իսկ այս տողերը գրողի հետ, պսակ դնելուն դէմ էին՝ ուսուցիչ Ստ. Տէր-Սարգըսեանցը, Խաչատուր Ցովհաննիսեանցը, բանաստեղծ Ալ. Ծատուրեանը և Իւրի Վեսելօվսկին, որ ներկայացաւ ժողովին: Սրանք էլ աւելացրին, որ նոյնիսկ հանգուցեալի կամքն է՝ չը Թաղվել պսակներով, ճառերով և առհասարակ շքեղ հանդէսով, միաժամանակ մատնանշելով—իբրև հաստատութիւն—հանգուցեալի բանաստեղծութիւններից մէկը, որ յիշեցրեց Վեսելօվսկին՝ ռուս լեզուով: Իսկ Ծատուրեանը դրան կցեց, որ, այո, անշուք և լուռ ու մունջ, Շահազիզեանի նշխարները հանգստարան տանելու մէջն էլ կայ յարգանքի առանձին արտայայտութիւն, վսեմութիւն և բանաստեղծութիւն, յիշեցնելով որ հանգուցեալը ո՛չ թէ Թեթևակի ու հարևանցի ակնարկ է գցել պսակ դնելու սովորութեան վրա, ինչպէս կարծվում է, այլ յաճախ ու շատերի մօտ է կրկնել դրա աւելորդութիւնը: Եւ թէ գլխաւորապէս նա ուզում էր, որ հայութիւնը, վերջապէս, սովորի իրօք գնահատել իր գործողներին ու գրողներին, ապահովելով նրանց իրանց կենդանութեան օրով, ու ոչ թէ շքեղ հանդէսներով Թաղի, ու յետոյ նրանց դամբաններին ու պսակների վրա հանգիստ առնի, միանգամայն մոռացութեան տալով նրանց:

Դրվեց և՛ այսպիսի հարց. պէ՞տք է կատարել հանգուցեալի վերջին, թէև ոչ փաստացի, կամքը,—պսակ չը դնել ու ճառ չը խօսել, թէ ոչ: Ոմանք պնդում էին՝ ճշտութեամբ կատարել նրա կամքը, ոմանք դէմ էին դրան: Հարցը քուէարկվեց, ոտքի կանգնելով, և 17 ձայնով ընդդէմ 14-ի՝ որոշվեց պսակ դնել:

Ժողովում կարդացվեց մեր Թեմի առաջնորդից ստացված հեռագիրը, որով նա իր խոր ցաւակցութիւնն է արտայայտում հանգուցեալ բանաստեղծի մահվան առիթով, յայտնելով որ ինքը Քիշնևում հոգեհանգիստ է կատարելու:

Դրանից առաջ ժողովը ընտրել էր 17 մարդուց բաղկացած մի մասնաժողով, որ զբաղվելու է Թաղման կարգադրութիւնով ու նրան վերաբերող հարցերով:

Յետոյ նախագահը՝ հանգանակութեան համար պատրաստված Թերթն առաջարկեց ներկայողներին, և հաւաքվեց 550 ռ.: Հանգանակութիւնը շարունակվելու է:

Լսվում է, որ, յամենայն դէպս, 500 ռ.

---

*) Հարցերը ես դասաւորել եմ՝ յօդուածիս ստրուկտուրի յարմարութեամբ:

**) Հնարաւորութիւն չունենալով ոչ միայն բոլոր խօսողների մտքերն արձանագրելու, այլ և գլխաւոր խօսողներինը, ես բաւականանում եմ հանուր համառօտութիւնով:

մասնագէտները գան գարնանը՝ մեծ եռանդով աջակցեն նրանց հիւանդութեան դէմ կռւելու ժամանակ, յատկապէս հրաւիրում ենք «Լօրի» մեղուապահական ընկերութեան ուշադրութիւնը, որը միմիայն կարող է լուրջ միջոցների դիմել և մասնագէտների հետ միացած ոյժով արմատախիլ անել այդ աւերիչ հիւանդութիւնը։

Ամսիս վերջերում ստացվեց «Լօրի» մեղուապահական ընկերութեան վարչութեան անունով իր և Փամբակի շրջանի հայ և ռուս մեղուապահներից մի բազմաստորագիր յայտարարութիւն, մօտ 100 ստորագրութեամբ, որով, համառօտ բացատրելով իրանց անելանելի վիճակը, կրկին և կրկին խնդրում են միջնորդութիւն յարուցել ուր հարկն է էժան, առանց ակցիզի շաքար ստանալու՝ գարնանը մեղուներին կերակրելու համար, աչքի առաջ ունենալով, որ գարունը մօտ է, պահանջը անյետաձգելի. իսկ մինչև այժմս ոչ մի դրական կամ բացասական պատասխան չէ ստացված։

Վարչութիւնը որոշեց կրկին անգամ միջնորդութիւն յարուցել այդ մասին բարձր իշխանութեան առաջ։

Դ.

Էջմիածին, 3 յունվարի

Յունվարի 2-ին, ժամը 1-ին, ճեմարանի հիւանդանոցում վախճանվեց միամսեայ վտանգաւոր հիւանդութիւնից ճեմարանի VI դաս. սան Մարտիրոս Ալթունեան։ Ընկերը տանջվում էր տիֆ, ուղեղի բորբոքում հիւանդութիւններով։ Հիւանդութիւնը ստացել է ինքն իրան անկանոն պահպանելուց։ Ձմեռ ժամանակ մի քանի ընկերներով յաճախ ամեն շաբաթ, երկու-երեք օրերով օգտվելով ճեմարանի ընդարձակ ազատութիւնից, գնում էր որսի՝ մէկ դէպի Սև Ջուր, մէկ՝ դէպի մօտակայ գիւղերն ու այգիները։ Անտանելի ցեխերին, սառնամանիքներին, ձիւն, բուք ու բորանին, ամեն տեսակի անտանելի օրերին իր ընկերներով գնում էր որսի։ Ի հարկէ ընկերական անկեղծ խրատներն ու խորհուրդները ոչինչ չեն կարող անել, քանի որ ընկերական անկեղծ խրատները մեր ճեմարանում ընդունվում են իբրև կեղծ և իբրև նախանձի ու չողոքորթութեան արդիւնք։ Այսպէս շատ անգամ ոտից գլուխ թրջված, սառած, գիշերով հազիւ գալիս ընկնում էր ճեմարան։ Վերջապէս տիրող ազատութիւնից այդպէս մեծ չափով օգտվելով, ինչպէս ասում են՝ «ինքն իրա գլուխը կերաւ», անբաղդութիւն պատճառելով թէ մեզ ընկերներիս և թէ, որ գլխաւորն է, ինքն իրան և իր ծնողներին։

Մահարբա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Յունվարի 6-ին Թիֆլիսում Ջրօհնեաց հանդէսը սովորական տարիների նման չանցաւ։ Այս տարի կատարվեց բաւական անշուք՝ Վանքի մայր եկեղեցու բակում։ Ռուսները խաչը Ջուր գցեցին Ալէքսանդրեան այգում։

◆ Կովկասեան գիւտանտեսական ընկերութեանը Պետերբուրգից հեռագրում են, որ գինու օրէնքի քննութիւնը տեղի կունենայ յունվարի 19-ին։

◆ Տօներին չքաւորներին բաժանելու համար ստացել ենք. 1) տ. Մարիամ Յարութիւնեանից 3 ր., 2) Նովօչերկասսկից, Յարութիւն Հախնազարեանից 5 րուբլի։

◆ «Զինգէր» կարի մեքենաների յայտնի ընկերութեան վարչութիւնը փակել է իր կենտրոնական պահեստն ու բոլոր բաժանմունքները և բոլոր ծառայողներին էլ արձակել է։

◆ Թիֆլիսում, Սօլօլակի տօնելի աշխատանքները, որ կանգ էին առել տօների պատճառով, երէկվանից վերսկսվեցին և առաջ են գնում բաւական արագ. արդէն փորել են 60 սաժէն, մնում է փորելու կրկին 40 սաժէն։

◆ Թիֆլիսի մանր առևտրականների արհեստակցական միութեան գլխաւոր յանձնաժողովի վերջին նիստում որոշվեց խնդրել Թիֆլիսի գեներալ-նահանգապետին՝ յետաձգել պատենտի տուրքերի ժողովելը մինչև այս տարվայ ապրիլի 1-ը, որովհետև քաղաքում առևտուրը շատ ընկել է և վերջերս անսովոր ճգնաժամ է առաջ եկել։

◆ «Часъ» լրագրի ասելով, մատակարարական բաժնի կառավարիչ Գերբէլը Կովկասի Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովից հեռագիր է ստացել, որով Փոխարքան միջնորդում է անյապաղ 25 հազար րուբլու օգնութիւն հասցնել Ծալկայի քաղցած գիւղացիներին։

◆ Թիֆլիս վերադարձաւ երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի Կովկասի լիազօր Մեդվեդիեվը։

◆ Մեզ հաղորդում են, որ փետրվարի 17-ին տեղի է ունենալու Հայոց Ազգագրական ընկերութեան պարահանդէսը, ուր նաև մրցանակներ պիտի տրվեն ինքնատիպ, ազգային զգեստների համար։

◆ Յունվարի 5-ին ոստիկանութիւնը, մտնելով «Նադէժդա» տպարանը, դադարեցրել է վրաց «Ցխարտղէլա» լրագրի հրատարակութիւնը։ Նոյն օրը «Իսարի» լրագրի խմբագրին յայտնել են, որ նա ենթարկված է 1000 րուբլի տուգանքի։

◆ Յունվարի 8-ից Թիֆլիսի 3-րդ արական գիմնազիայի շէնքում բացվեց ժողովրդական համալսարանի հայկական սեկցիան։

◆ Մօտ օրերս Թիֆլիսում լոյս կը տեսնի ռուսերէն լեզուով մի ամենօրեայ թերթ «Жизнь» (Կեանք) անունով։

◆ Մօտ օրերս Թիֆլիսում լոյս կը տեսնի վրացերէն լեզուով մի նոր լրագիր «Ազրի» (Միտք) անունով։

◆ Միջոցների բացակայութեան պատճառով դադարեց վրացերէն լեզուով Թիֆլիսում հրատարակվող «Ախալի Քվէղանա» (Նոր-Աշխարհ) առաջադէմ շաբաթաթերթը։

◆ Բնութիւնը սիրող Թիֆլիսի ընկերութիւնը կազմակերպում է մի շարք դասախօսութիւններ Կովկասի բուսականութեան և Ջրի մասին։

◆ Յունվարի 20-ին, երեկ. ժամը $7^{1}/_{2}$-ին, Կովկասի բժշկական ընկերութեան մէջ կը կայանայ հերթական ընդհանուր ժողովը։

◆ Ստացանք. 1) Աւ. Իսահակեանի «Երգեր և վէրքեր» գիրքը. էջ 288. գինը 1 րուբլի։ 2) Ադօլֆ Ռուտէ «Ժողովրդական դպրոցի մեթոդիկա». գերմ. փոխ. Յովհաննէս Տէր-Միրաքեան. հրատարակ. Գ. Գալստեանի. էջ 434, գինն է 1 ր. 50 կ.։ Այս գրքերի մասին մենք կը խօսենք առանձին յօդուածով։

◆ Թիֆլիսում, գինետների և պանդոկների գործատէր ծառայողները կրկին շարունակում են ամեն կերպ աշխատել՝ յետ կասեցնել աշխատել ցանկացող ընկերներին։ Յունվարի 4-ին, երեկոյեան, մօտ 10 հոգի մտնում են Վելեամինեան փողոցում, Ջանգիէրիի և Արղութինսկի-Դոլգօրուկովի գինետունը և, առանց մի խօսք ասելու, սկսում են ծեծել աշխատող բանւոր Զախարի Ջավախաշվիլուն, պահանջելով չաշխատել։ Վրա հասած ոստիկանները կարողանում են բռնել նրանցից մէկին՝ Թելաւեցի Գրիգոր Բարայեվին։ («Յ.»)

◆ Յունվարի 6-ին Թիֆլիսի Մետեխի բանտային վարչութիւնը երևան է հանել փորուածք։

◆ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն երէկ դիմեց Թիֆլիսի նահանգապետին հետևեալ առաջարկագրութեամբ. «Հոգ տանելով ուսանող սերնդի ֆիզիքական կրթութեան կանոնաւոր դրութեան անհրաժեշտութեան մասին, ես մտադիր եմ նրանց համար առանձին հրապարակներ հաստատել, ուր տեղի կունենան հասարակական խաղեր, աշակերտական տօներ և ֆիզիքական վարժութիւններ և այլն. բայց որովհետև կրթական շրջանային վարչութեան տրամադրութեան տակ ներկայումս չը կայ ազատ և յարմար հողաբաժին յիշեալ նպատակի համար, հնարաւորութիւն չը կայ որևէ բան անել այդ ուղղութեամբ։ Ուստի ես պատիւ ունեմ խոնարհաբար խնդրել ձերդ պայծառափայլութեան, յարմար և հնարաւոր չէ՞ք գտնի արդեօք Թիֆլիս քաղաքի զանազան տեղերում տեղեր յատկացնել հրապարակներ շինելու համար»։

◆ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը առաջարկել է Վլադիկավկազի երկաթուղային կառավարչին աւելացնել ապրանքների վրա հսկող ծառայողների թիւը. մինիստրութիւնը մատնանշել է նաև, որ ծառայողներից որևէ մէկը եթէ բռնվի որևէ գողութեան մէջ, անմիջապէս կարձակվի պաշտօնից։

◆ Դեկտեմբերի 30-ին Կարսի երկաթուղագծում, Կարս-Ղարաքիլիսա ուղիում, ձիւնային մրրիկներ են տեղի ունենում։ Եկած ահագին ձիւնի պատճառով գնացքների երթևեկութիւնը շատ խանգարված է։ Թէև ահագին թուով բանւորներ մեքենաներով մաքրում են ճանապարհը ձիւնից, բայց և այնպէս գնացքները շարունակ ուշանում են 2—5 ժամով։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Յունվարի 7-ին, երեկոյեան ժամը 4-ին, Արմենակի բազարում, Թիֆլիսի 2-րդ կարգի վաճառական Նիկօլայ Նարիմանովի բնակարանն են մտնում երեք անյայտ մարդիկ և Նարիմանովի ազախին Կատարինէ Պապուրաձէից պահանջում են՝ ցոյց տալ թէ որտեղ են գտնվում փողերը։ Վերջինս, առանց շփոթվելու, դուրս է վազում պատշգամբ և օգնութիւն աղաղակում։ Օգնութեան հասած ոստիկանական պաշտօնեաները բռնում են երկուսին, որոնք իրանց անուանում են Բօրչալուի գաւառի բնակիչներ՝ Սեդրակ Տէր-Գրիգորեան և Մարտիրոս Յովհաննիսեան։

◆ Յունվարի 6-ին, բօրանի վրա, Ղազախի գաւառի բնակիչ Աւետիք Թէժուրադեանի գրպանից Թիֆլիսեցի Արշակ Մելիք-Հայկազեանը կամենում է հանել ոսկէ ժամացոյցը շղթայով, որ արժէ 50 ր., բայց իր ժամանակին նկատվում է և ձերբակալվում։

◆ Յունվարի 7-ին, երեկոյեան ժամը $7^{1}/_{2}$-ին, Պօչտովայա փողոցում չորս չարագործներ սպանում են դռնապան Կարապետ Կարապետեանին, որ եղբօր հետ վերադառնալիս է եղել տուն։ Չարագործներին բռնելու համար միջոցներ են ձեռք առնված։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Ինչպէս տեղեկացել է «Бак. Эхо» լրագիրը, Բագուի քաղաքային գանձարկղի դրութիւնը 1908 թւականից լաւանում է։ Մտածում են վճարել ծառայողների ռոճիկները, հատուցանել կապալառուների պարտքերը և այլն։

◆ Յունվարի կէսին Պետերբուրգից Բագու է գնալու երկաթուղիների գլխաւոր տեսուչ ինժեներ Դոմբրօվսկին, որը մինիստրութիւնից ուղարկվում է գնացքների երթևեկութիւնը, դրամական հաշիւները կանոնաւորելու և մի քանի կարևոր խնդիրներ լուծելու համար։ Դոբրօվսկին ճանապարհորդում է յատուկ սալօն-գնացքով։

◆ Բագու կայարանում 1-ին և 3-րդ կարգի դահլիճներում, ճանապարհորդների խռնվելու պատճառով, ամենայն օր տեղի են ունենում ապրանքի գողութիւններ և գրպանահատութիւններ։

◆ Բագւում վախճանվել է սրտի պայթումից Վահրամ Կարապետեան Մուշթաֆեանը, որ վարում էր իտալական հիւպատոսի պաշտօնը Բագւում։

◆ Բագւում բացվել է մահմեդական ուսուցչանոց «Իսլամ» անունով։

◆ «Каспій» հաղորդում է, որ Կոստանդին Խատիսեանը իր նամակ խմբագրութեան մէջ ասում է, որ նա դիմում է հայկական սօցիալ-դեմօկրատական բանւորական կազմակերպութեան, առաջարկելով մասնակցել Կարինգինի հետ մօտիկ ապագայում ունենալիք դատին։ Ինչպէս հաղորդում է նոյն լրագիրը, Բագուի կօմիտեսը յայտնել է, որ հ. ս.-դ. բ. կ. չէ կարող մասնակցել այդօրինակ դատերին։

◆ Բագւում ալիւրավաճառ «Գլազ և Կրեստինգէն» ֆիրմայի դրամատար Սամօյլօվը վերցնում է 1300 ր. և իր մօտ եղած 414 ր. միացնելով գնում է կայարան եկած վագօնները ստանալու։ Դեռ չը հասած կայարանին, երկու անյայտ մարդիկ բռնում են նրան մի տան դռան մէջ և մահվան սպառնալիքով, ատրճանակը մերկացնելով, խլել են բոլոր փողերը և փախել։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, 1 յունվարի

Ի նկատի ունենալով, որ շատերը ինձ են վերագրում «Մշակի» 1907 թ. № 139-ում տպագրված «Ով էր մեղաւոր» յօդուածը, սրանով յայտարարում եմ, որ այդ յօդուածի հեղինակը ես չեմ և այդ ժամանակ ես Բագու քաղաքում չեմ եղել, որը և կարող են վկայել շատերը։

«Մշակի» աշխատակից՝
Վաղարշակ Թումանեան

Բագու, 5 յունվարի

Ցանկանալով յարգել իմ բարեկամ հանգուցեալ Վահրամ Կարապետեան Մուշթաֆեանցի յիշատակը՝ պսակի փոխարէն ներփակ ուղարկում եմ խմբագրութեանդ քսան և հինգ րուբլի, խնդրելով յատկացնել Նոր-Բայազէտի սովեալների օգտին։

Գէորգ Իզրայէլեան

Թիֆլիս, 6 յունվարի

Բարի եղէք երկտողիս մի անկիւն շնորհել «Մշակ» լրագրի մօտակայ համարներից մէկում։

Դեռ 1904 թւականին, երբ այցելեցի ս. Գրիգոր Լուսաւորչի Խոր-Վիրապ կոչված վանքը և, տեսնելով նրա անմխիթար դրութիւնը, խոստացայ յիսուն րուբլաչափ մի նուիրաբերութիւն անել. լսելով այդ՝ այն ժամանակվայ վանահայր Գ. վ. Ռշտունին ցանկութիւն յայտնեց, որ այդ գումարով մի նոր վարագոյր առնվի Խոր-Վիրապի վրա կառուցված աղօթատան սեղանի համար. ուրախութեամբ յանձն առնելով այդ, չանցած երկար ժամանակ, դժբաղդաբար սկսվեցին հայ-թուրքական ընդհարումները և ի ցաւ սրտիս ոչ մի կերպ հնարաւորութիւն չունէի իր ժամանակին կատարելու իմ այդ պարտականութիւնը։

Ի դէպս՝ չը մոռանամ յիշատակելու, որ վերև կոչված վանքը գտնվում է Երևանի գաւառամասում, Արաքս գետի ափին և շրջապատված է թուրք գիւղերով։

Ներկայումս, երբ մեր երկրում հացի խնդիրը այնպիսի սուր կերպարանք է ստացել, որ շատերի համար կուշտ չոր հաց ուտելը երազ է դարձել, սխալված չէի լինի, որ իմ խոստացածս նուիրաբերութիւնը փոխարինէի յօգուտ չարատանջ սովեալների։

Հաճեցէք ընդունել, յարգելի խմբագիր, ընդ ամէն 50 րուբլի, որից խնդրում եմ 20 րուբլի յատկացնէք Նոր-Բայազէտի սովեալներին, 15 րուբլի Թիւրքահայ բազմատանջ սովեալներին, իսկ 15 րուբլին թողնել Թիֆլիսի բարեգործական ընկերութեան տրամադրութեան տակ։

Փարսադան Տէր-Ստեփանեան

Բագու, 5 յունվարի

«Նասիբեանց և Տէր-Պետրոսեաններ» առևտրական տունը ցանկանալով յարգել իրանց վաղեմի բարեկամ հանգուցեալ Վահրամ Կարապետեան Մուշթաֆեանցի յիշատակը՝ պսակի փոխարէն ուղարկում է յարգելի խմբագրութեանդ յիսուն րուբլի, որից 25 րուբլի խնդրում է յատկացնել Նոր-Բայազէտի, իսկ 25 ր. Թիւրքիայի սովեալների օգտին։

Կարգադրիչ-անդամ՝
Աբրահամ Նասիբեան

Երևան, 2 յունվարի

Հնդկաստանի և Պարսկաստանի հայոց առաջնորդ Սահակ արքեպիսկոպոսը անցած նոյեմբերի 23-ին № 150 գրութեամբ յայտնում է, որ հեռագրով յանձնարարած է եղել ինձ և բժշկապետ պ. Բագրատ Նաւասարդեանցին հանգուցեալ Հայրապետի յուղարկաւորութեանը, իբր և պարսկա-հնդկահայերի կողմից, ներկայացուցիչը և նրանց վշտի արտայայտիչը լինել։

Հեռագիրը, ինչպէս երևում է, ուղղված է

չափ ուղարկվելու է սովատանջ հայերի օգտին։

Ժամը 5-ին նիստը փակվեց, ժողովը ցրվեց, իսկ յանձնաժողովը մնաց՝ իր նիստը կազմելու։

IV

Դեկտեմբերի 28-ին, առաւօտեան 11 ժամին, Լազարեան ճեմարանի վարչութեան ձեռներէցութեամբ, ճեմարանում կատարվեց հոգեհանգիստ, որի կիսում Յար. աւագ-քահ. Պապօվեանցը ներկայ եղող հայ աշակերտութեանը երկու խօսքով բացատրեց՝ յանձին հանգուցեալի զգացված կորուստի նշանակութիւնը։ Ներկայ էր և՛ դպրոցի վարչութիւնը։ Նոյն օրը, 2 ժամին, հոգեհանգիստ կատարվեց ս. Աստուածածին եկեղեցում։

Իսկ երեկոյեան 4 ժամին կայացաւ կարգադրիչ յանձնաժողովի նիստը, որին ներկայ էր և՛ նոյն օրը Նոր-Նախիջևանից եկած Երուանդ Շահազիզեանը, հանգուցեալի եղբօրորդին, և պարզվեց, որ եղբ. Ժամհարեանցներին հանգուցեալի կողմից պահ տրված ծրարը միայն մի մուրհակ էր պարունակում իր մէջ։ Կաթողիկոսական տեղակալի,—ինչպէս սինօդի նախանդամի, ինչպէս անուանում է Սուքիաս արքեպիսկոպոսը,—հաղորդագրութիւնից էլ իմացվեց, որ հանգուցեալը ոչ էլ ս. Էջմիածնում որևէ կտակ է պահ տուել։

Այդ նիստում, որին նախագահում էր նախկին հանուր ժողովի նախագահ՝ Գր. Խալաթեանը, և որի քարտուղարն էր ընտրված բժ. Ս. Շահ-Նազարեանցը, յանձնաժողովը որոշեց՝ առաջին որ եկեղեցում տեղի ունենալիք ճառախօսութիւնները լինեն հետևեալ կարգով. 1) եկեղեցականութիւնը, 2) Մոսկվայի հայ գաղութի ներկայացուցիչը, որպիսի դերում ընտրվել էր նոյն Խալաթեանը, 3) ուրիշ տեղերից ներկայանալիք պատգամաւորները, 4) Լազարեան ճեմարանի հայ աշակերտութեան ներկայացուցիչը, 5) տեղական հայ ուսանողութեան ներկայացուցիչը և 6) բանաստեղծ Ա. Ծատուրեանը. իսկ մասնաւոր անձնաւորութիւնները, ժամանակի սղութեան պատճառով, կարող են խօսել հանգստարանի դահլիճ-սեղանատանը։ Որոշվեց նոյնպէս, որ գաղութի պսակը կրելու է այս մակագիրը՝ «Անմոռանալի ուսուցչին և ազգային բանաստեղծ Սմբատ Շահազիզեանին՝ Մոսկվայի հայ գաղութը», այլ և եկեղեցում յիշվելու են այն անձերի անունները, որոնք ներկայացուցիչ են կարգված հեռագիրներով։

Ստացված էին ընդամենը 35 հեռագիր։ Դագաղը եկեղեցուց դուրս տանելիս, ճեմարանի հայ աշակերտութիւնը կենդանի ծաղիկներ պէտք է ցանի դագաղի վրա, և դագաղը լուսանկարվի։ Յետոյ հանգիստ պէտք է տալ ճեմարանի առջևը, և եկեղեցական հանդէսով տանել մինչև Կուզնեցկի-մօստ կոչված փողոցը. այդ միջոցին աշակերտներից երկուսը կրելու են գաղութի պսակը։

Ժողովի ընթացքում, հայ ուսանողութեան կողմից ներկայացան երկու ներկայացուցիչ, որոնք առաջարկեցին, որ իրանց էլ յանձնաժողովի անդամներ ճանաչեն, որ և ընդունվեց. դրանք էին ուսանող Եղիազարեան ու Միրաքեան։ Դրանք եկել էին գլխաւորապէս պահանջելու, որ հանգուցեալի դիակը անդամահատվի։ Այդ հարցը շատ երկար զբաղեցրեց յանձնաժողովին և թեր ու դէմ կարծիքների տեղիք տուեց։ Սակայն, ինչքան էլ, նայելով տիրող կարծիքին, հանգուցեալի մահը կասկածելի էր համարվում, յանձնաժողովը, ինչպէս և Եր. Շահազիզը, այդպիսի բան նոյնիսկ ենթադրել դժուարանում էին, աչքի առջև ունենալով թէ այն հանգամանքը, որ նրան թունաւորելու ոչ առիթ կար, ոչ էլ գործին էր պէտք,—քանի որ աշխարհ յայտնի էր, որ նա բարոյապէս էր թունաւորված,—և թէ այն, որ վերջին տարիները նրան բուժող բժ. Մկրտիչ Թանգեանը գլխաւորապէս վկայել է, որ հանգուցեալը սրտի արատ էր ձեռք բերել։ Յամենայն դէպս, որպէսզի հասարակական խիղճը հանգստանայ, որոշվեց անդամահատել։ Անդամահատութիւնը, որի պատճառով հետևեալ օրը դիակը տարվեց կլինիկը, դատախազի, թաղական ոստիկանապետի ու այլոց ներկայութեամբ, հաստատեց, որ հանգուցեալը յանկարծամահ է եղել սրտի պայթիւնից։

Յանձնաժողովի նոյն նիստին, բարոյապէս թունաւորողի կողմից, զոհի դագաղի վրա պսակ դնելու մի փորձ էլ արվեց, բայց յանձնաժողովը կողմնակի հասկացրեց, որ այդ քայլը առնուազը կը սաստկացնի հասարակութեան զայրոյթը, որ և լռութեամբ ընդունվեց։

Տեղական ռուս թերթերից երեքն արված սգայայտարարութիւնը, ռուսաց ծննդեան տօների պատճառով, հազիւ լոյս տեսաւ ամսի 28-ին. մի քանիսում տեղաւորված էր նաև հանգուցեալի մահացուցակ-կենսագրութիւնը։

V

Դեկտեմբերի 30-ին, կիրակի, պատարագի կիսից սկսած, աւագ եկեղեցին լի է խուռն բազմութեամբ։ Յանձնաժողովը, առանձին թերթիկներով, յայտնում է ժողովրդին ճառախօսութիւնների կարգը։ Դագաղի վրա դրված են հինգ պսակ։

Պատարագի վերջը խօսեց այս տողերը գրողը, յետոյ կարդացին՝ յանձնաժողովի նախագահ ու գաղութի ներկայացուցիչ Խալաթեանը, յանձնաժողովի անդամ ու քարտուղար բժ. Շահ-Նազարեանցը, Լազ. ճեմարանի VIII դասարանցի՝ Մխիթարեանը, ուսանողութեան ներկայացուցիչ Եղիազարեանը և Ա. Ծատուրեանը, որ, դիմելով հանգուցեալին, յայտնում էր, որ կատարում է նրա, իր սիրելի բարեկամի, վերջին բանաւոր կտակը—պսակ չը դնել ու ճառ չը խօսել, և արտասանեց հանգուցեալի մի բանաստեղծութիւնը, որի միայն սկիզբն է տպված «Յօբելեանի տարեդարձ» գրքում, իսկ միւսը արգելված է եղել գրաքննութիւնից։ Բանաստեղծը այդ ոտանաւորն արտասանեց, ինչպէս միշտ, նրա ոգու խոր ըմբռնումով, հատու շեշտով և ընտիր առոգանութեամբ՝ արցունքներ խլել տալով հանգուցեալի եղբօրորդուց։ Յուղարկաւորութեան ժամանակ ժողովուրդը, ահագին բազմութեամբ, ոտքով հետևեց սգակառքին, մինչև նոյն իսկ հանգստարանը, որ գտնվում է երեք վերստ հեռաւորութեան վրա։

Դագաղը գերեզման իջեցրած բոլէին, սրտառուչ խօսքեր ասաց Իւրի Վեսելօվսկին ռուս լեզուով, Ծատուրեանի պէս, հրաժարվելով ճառ խօսելուց։ Բանից երևաց, որ նա, քսան տարուց ի վեր, ծանօթ է եղել հանգուցեալին և 15 տարի՝ նրա մտերիմ բարեկամը, աւելացնելով որ ինքը համոզված է, որ ոչ ոք հանգուցեալին այնքան չէր կարող սիրած լինել, ինչքան ինքը, և թէ այն միջոցին, երբ նա գերեզման է մտնում, իր՝ խօսողի սրտում թողնում է մի խոր դատարկութիւն։

Թաղումից յետոյ, հանգստարանի դահլիճում, Խալաթեանը յայտնեց, որ ստացվել են 100-ից աւելի հեռագիրներ, որոնցից, ներկայողների համաձայնութեամբ, կարդաց միայն այնպիսիները, որոնք ուղարկված էին հիմնարկութիւններից, ընկերութիւններից, խմբագրութիւններից և այլն, աւելացնելով որ կարգադրիչ յանձնաժողովը, լրագրութեան միջոցով, հրատարակելու է բոլոր հեռագիրները, թէ կարդացվածներն ու թէ չը կարդացվածները։

Ուրախալի է նկատել, որ, թէպէտ հանուր ժողովում, պսակներ չը դնելու, այլ նրանց փոխարէն, նրանց արժէքը սովալլուկ հայերին ուղարկելու իմ առաջարկը, երեք ձայնի առաւելութեամբ, չընդունվեց,—թէպէտ ես հասել եմ իմ նպատակին, քանի որ իմ այդ առաջարկը ձեռք բերեց՝ ժողովականների համարեա կէս մասի պաշտպանութիւնը,—այսուամենայնիւ պսակների շատ չնչին քանակութիւնը փայլուն կերպով ապացուցեց, որ թառամելի ու առհասարակ նիւթական պսակները, մեր ժամանակում, պէտք է տեղի տան իրական պսակներին՝ կենդանի գործին։ Գլխ. երեք քաղաքից էլ հեռագրել են, որ, պսակների փոխարէն, նրանց արժէքը (հարիւրաւոր րուբլիներ) գործադրվելու են բարեգործական նպատակներով, իրանց տեղերում։

Բացի դրանից, պատիւ իրան, յանձնաժողովը որոշել է՝ սովալլուկ հայերի օգտին ուղարկել 500 րուբլի։

Դահլիճում «Վտակ» թերթի խմբագրութեան կողմից խօսեց ուսանող Շահխաթունեանը, այլ և, իրանց ցանկութեամբ, խօսեցին՝ Պօղ. Աբէլեանը և Գալ. Մելիք-Յարութիւնեանը։

Իսկ վերջը՝ իր սրտագին շնորհակալութիւնը յայտնեց Երուանդ Շահազիզը հայ գաղութին, աւելացնելով որ ինքը շատ զգացված է գաղութի արտայայտած խոր համակրանքից դէպի հանգուցեալը, թէ ինքը և իր տոհմը՝ միայն բարձրանալ ու հըպարտանալ կարող են, քանի որ, իրանց բնավայրերում, նրանք այդպիսի պատիւներով երբէք չէին կարող թաղել իրանց հանգուցեալին։ «Խոնարհում եմ,—ասաց,—ձեր ցոյց տուած յարգանքների առջև»։

Աւելորդ չեմ համարում բերել այստեղ հանգուցեալ բանաստեղծի «Զոհեր» խորագրով բանաստեղծութեան սկիզբը, որի ամբողջը կարդացվեց եկեղեցում։

Մեռաւ իմ մուզան, հանգաւ և կրակ,
Անտառը լցվեց չոր տերևներով.
Երկինքը ծածկվեց, փախաւ արեգակ,
Էլ ես չեմ ապրում ուրախ երգերով։
Եւ աստեղազարդ բոլորակ գմբէթ,
Եւ արծաթափայլ Ջրերի խոխոջիւն
Այլ ևս՞ չեն խօսում բանաստեղծի հետ,
Եւ ոչ այցելում աւերված իմ տուն։
Այժմ ինձ մնաց միայն փշրանքներ,
Մայր մուսաւ ահա և նշոյլ վերջին.—
Հանում եմ զրահս, և զէն, և՛ զարդեր.
Յանձնում եմ դրանց մանուկ սերնդին։
Բայց թող հայկական որդիքն իմանան,
Որ իմ սուգս նոցա վիճակն է եղել.
Որ երբէք վախլուկ զինուորի նման
Թշնամուս առջև վահան չեմ ձգել։
Չեմ երկրպագել ես ոսկի հորթին,
Եւ ոչ կուռքերին պաշտել օտարի.
Այլ միշտ հոգևոր կարօտ ծարաւի,
Տուել եմ արժանն ամեն մի մարդին։
Չեմ տաշել դագաղ, ու մատաղ կեանքեր
Կանաչ ծառի պէս ծաղկել են յոյսեր։
Սրսկել եմ դրանց Ջրով կենդանի,
Որ գալոց ազգին լինին պտղաբեր։

Եմ. քահ. Նազարեան

Մոսկվա, 31 դեկտեմբերի

եղել Վաղարշապատ և, ինչպէս երևում է, պ. Բ. Նաւասարդեանի նամակից, ինչպէս ես, նոյնպէս և նա չէ ստացել, որով զրկվել ենք մեր հեռաւոր եղբայրների մեզ ցոյց տուած պատւից, որի համար և յայտնում ենք նախ մեր խորին շնորհակալութիւնը պարսկահնդկահայերին ու գեր. Սահակ սրբազանին՝ մեզ ցոյց տուած պատւի համար, երկրորդ՝ մեր վիշտը, ստացած չը լինելով յանձնաբարական հեռագիրները, այդ պատւից զրկված լինելու համար։

Յուսիկ արքեպիսկոպոս

Ո՛ՆՑ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՄ

Եթէ, հայ եղբայր, ցորենից աւել քեզ
Թանգ է գարին,
Քեզ յատկանիշ է միշտ ստրկանալ
Ամեն յիմարին,
Մոռանալ շքեղ գարունը ծաղկած,
Սիրել ձմեռը տկլոր ու սառած,
Թողնել արեգի գարնանամուտը,
Ցօնել սառցապատ ձմեռնամուտը,
Ո՞նց շնորհաւորեմ այդ քո Նոր-Տարին,
Որ կապկութիւն է ընդմիշտ օտարին։
Շնորհաւորել
Քո մեզ ընծայած յեղափոխութի՞ւն,
Թէ՞ լաւ ըմբռնած Մեծ ազատութիւն,
Որ պատուով ապրած հայի անունը,—
Միևնոյն է այդ, իմն է թէ քոնը,—
Գիտես քաջաբար բարձր դու պահել,
Քեզ չը լողին էլ չը խնայել,
Կովկասումըն է, թէ Ամերիկայում,
Ազգասիրաբար գետին գլորել։
Շնորհաւորել
Քեզ քաղաքական ո՞ր հասունութեամբ.
Արդեօք խաւարած քո գիտակցութեամբ,
Գլուխը կորցրած քո կուսակցութեամբ,
Մոլորվածներին երկրպագութեամբ,
Խեղճ, անգիտակից քո բանւորութեամբ,
Աւազակի հետ քո դաշնակցութեամբ
Թէ՞ ազատ կամքի, ազատ համոզման
Անչափ, անսահման քո ատելութեամբ։

Մոծակ

ՄԱՄՈՒԼ

Խօսելով պատերազմի հաւանականութեան մասին Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ, Թիֆլիսում նոր հրատարակվող «Кавказское Армія» թերթը գրում է.

«Ոչ ոքի համար այժմ գաղտնիք չէ, որ մենք ականատես ենք երկու հզօր մրցակիցների՝ Գերմանիայի և Անգլիայի կուին՝ համաշխարհային գերիշխանութեան համար։

«Վիլհելմ II կայսրը իրան արժանաւոր հակառակորդ գտաւ ի դէմս Էդուարդ VII-ի, որը դաշնակցելով Ճապոնիայի հետ, համաձայնութիւններ կնքելով Թիւրքիայի և Ռուսաստանի հետ և գրգռելով իտալացիներին Աւստրիայի դէմ՝ դրեց գերմանացիներին մեկուսացման դրութեան մէջ...: Ֆրանսիան ձգվեց Մարոկկօյի մէջ և Ճապոնիան զբաղված է Միացեալ-Նահանգների սպառնալիքի ներքոյ։ Այժմ Վիլհելմը մտադիր է արձակել իր ձեռները Ռուսաստանի կողմից, հրելով մեզ դէպի պարսկա-թիւրքական արկածը»։

Այս լրագիրը հարցնում է՝ «պէ՞տք է մեզ պատերազմը», և պատասխանում է.

«Ոչ. ամենակատարեալ շովինիստը կասէ. «Ռուսաստանին հարկաւոր է խաղաղութիւն»։ Բայց չէ՞ որ միևնոյնը պահանջում էր հասարակական կարծիքը մեր վերջին պատերազմի առաջ։ Չէ՞ որ մենք խորապէս համոզված էինք, թէ քանի որ մենք չենք ցանկանում կռիւ սկսել, Ճապոնիան չի համարձակի կռիւ սկսել, և մենք անհոգութեամբ արձակեցինք Հեռաւոր Արևելքից պահեստի զօրքը, թողեցինք բերդերը կիսովին զինաթափված և հարկաւոր պատրաստութիւնները չը տեսանք»։

Լրագիրը խորհուրդ է տալիս է զգոյշ լինել.

«Չը քնեցնենք մեզ. Թիւրքիան այլ ևս այն չէ, ինչ որ երեսուն տարի առաջ էր, և նրա զօրքը, անշուշտ, շատ բան է սովորել գերմանացի կրթիչներից»։

*

«Закавказье» թերթը, ինչպէս երևում է, շատ անգիտակ կամ աչառու աշխատակից ունի հայոց վերաբերեալ խնդիրների մասին։ Այդ լրագրի № 3-ում ոմն Զ., խօսելով կաթողիկոսական ընտրութիւնների մասին, յայտնում է, որ երեք հոսանք կայ, և այն, ինչ որ տարիների ընթացքում «Մշակն» է քարոզել, նա վերագրում է այլոց։ Հանրածանօթ իրողութիւն է, որ մեր թերթը քարոզել է միշտ, թէ հայոց եկեղեցին կարօտ է վերանորոգութեան, դեմոկրատացման, ազատման կղերական ոգուց. այդ մենք քարոզել և կրկնել ենք 36 տարվայ ընթացքում։ Իսկ այն հոսանքը, որի արտայայտիչ է հանդիսանում «Վտակը», կամ պահանջել է եկեղեցու ջնջումն, կամ համակվել է սատրիկ կղերական ոգով, մինչև այն աստիճանի, որ եկեղեցու հանգուցեալ պետի նուիրական գերեզմանին երկրպագելու մեծ ցանկութիւն է արտայայտում։ Արդ, ռուս թերթի անգիտակ և համբակ կամ աչառու քննադատը «Վտակին» է վերագրում «Մշակի» քարոզածները և արտայայտած կարծիքները։

Ռուս թերթի աշխատակցին խորհուրդ կը տայինք աւելի բարեխիղճ և անաչառ լինել հայ կեանքի մասին տեսութիւններ անելիս։

*

Նորերս վաճառական Ղամբարեան մի նամակով, տպված «Тифл. Листокъ» թերթի մէջ, յայտնելով որ ստացել է մի նամակ «տերրորիստ-վերակազմեալների միջազգային դաշնակցութեան Թիֆլիսի խմբից», որով պահանջում են իրանից 2000 ր., կոչ է անում հասարակութեան՝ պաշտպանել իրան, ասելով թէ ոչ մի հնարաւորութիւն չունի այդ գումարը վճարելու։

Բագւում ևս յայտնի հարուստ Թաղիևը դիմելով մի կոչով Բագուի մուսուլմաններին՝ նոյնպէս յայտնում է, որ, ինչ-որ շանտաժիստներ, որոնք իրանց կոչում են «կօմմունիստ-անարխիստների» կուսակցութեան անդամներ, պահանջում են իրանից 40,000 րուբլի, բայց նա չէ կարող տալ, քանի որ ինքն առանց այն էլ մեծ բարեգործութիւններ է անում աղքատ, անգործ մարդկանց։

Այդ առիթով, «Тифл. Листокъ» շատ իրաւացի կերպով նկատում է, որ Թաղիևը և Ղամբարօվը իրանց մերժման պատճառաբանութիւնը շատ սխալ հողի վրա են դնում։ Նրանք պէտք է պատասխանեն, թէ հրաժարվում են տալ ոչ թէ նրա համար, որ չունեն, կամ արդէն շատ են տուել և տալիս են, այլ չեն կամենում ենթարկվել բռնութեան ում և իցէ կողմից։ Պէտք է ամեն բանի մէջ ցոյց տալ քաղաքացիական քաջութիւն։ Ամերիկացին, գերմանացին, ֆրանսիացին, որոնք դաստիարակված են իսկական քաղաքացիական ոգով, այդպիսի պահանջին կը պատասխանէին կամ ծաղրով, կամ դիմադրութիւն ցոյց կը տային, բայց մեր քաղաքացիները դրամաշորթ յեղափոխականների կամ շանտաժիստների հետ դեռ բանակցութեան մէջ են մտնում։ Վերջապէս, չէ՞ որ յեղափոխական կուսակցութիւնները յայտնել են, թէ իրանք ևս բռնի կերպով դրամ շորթելուն հակառակ են։

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

(Հեռագրական)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ 1907 թ. 9 ամիսների ընթացքում պետական սովորական եկամուտները ծախքերից աւելի էին 193,316,000 րուբլով։ Սովորական եկամուտները անցեալ տարվանից 47,600,000 րուբլով աւելի էին. սովորական ծախքերը պակաս էին 10,508,000 րուբլով, արտակարգ եկամուտները պակաս էին 842,209,000 րուբլով, ծախքերը՝ 468,155,000 րուբլով։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը ուղարկեց մի հրահանգագիր, որ գիմնազիաների և ռէալական դպրոցների լիակատար դասընթացքը քննութիւն տուողներին քննեն կողմնակի անձինք, ինչպէս յիշեալ կրթական հաստատութիւններում, այնպէս և ուսումնարանական շրջանների վարչութեան կից գտնվող քննիչ յանձնաժողովներում։ Վերջիններում քննութեան կազմակերպութիւնը թողնված է շրջանային ուսումնարանական տեսչութեան։

ՓԱՐԻԶ։ Գեներալ Դամադը հաղորդում է, որ լուրջ ընդհարում է տեղի ունեցել Մուլէյ-Հաֆիզի հետ։

Մարոկկօցիները դիմել են փախուստի։ Սետտատ քաղաքը գրաւված է։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական արևելեան բանկի վերատեսուչ Գուտմանը յայտնեց, որ Թէհրանում գերմանական-պարսկական բանկ բանալը յետաձգված է, ի նկատի ունենալով այն անորոշ կացութիւնը, որ ներկայումս տիրում է Պարսկաստանում, որի պատճառով էլ արևելեան բանկը չէ ցանկանում ինքնուրոյն կերպով գլուխ բերել այդ բանկի համար հաստատած 5 միլիոն ֆրանկ դրամագլխի գործը։

Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ, յունվարի 19-ին ռուսական սահմանագլխում, Ռուսաստանից եկող լեհ շինական բանւորների համար, բացվելու են առանձին սահմանագլխային հաստատութիւններ Իլօվում, Ստրասբուրգում, Գոլուբում, Տօրնում, Հօգէնզալցում և Կրուշվիցում, որոնց վրա կը նշանակվի յատուկ հսկիչ։ Սահմանը անցնող իւրաքանչիւր բանւոր պարտաւոր է երկու մարկով ձեռք բերել օրինական վաւերաթուղթ։

ՁԱԼՑԲՈՒՐԳ։ Գիշերվայ ժամը 2 և 30 րօպէին սրտի պայթումից վախճանվեց Տօսկանի մեծ դուքսը։

ՀԱՄԲՈՒՐԳ։ Յունվարի 2-ին զգացվեց միջին ուժի երկրաշարժ 9000 կիլոմետր տարածութեան վրա։

ՑԷՏԻՆԷ։ Յունվարի 4-ի երեկ. ժամը 7-ին զգացվեց ալիքանման երկրաշարժ։

ՍՕՖԻԱ։ Կաբինետը վճռեց լիակատար կազմով հրաժարական տալ։

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ։ Ստորտինգը միաձայն հաւանութիւն տուեց Նորվէգիայի անձեռնմխելիութեան պայմանագրին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԸՆԴՈՒՆՈՂՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—$9^{1}/_{2}$—2 ժ. ատամի հի.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԿՉԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1^{1}/_{2}$—2 ժ. մանկաբարձութեան։
Փ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Աղքատները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ԶՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ⟶

ԲԱԳՈՒ (Գանձակ, Եւլախ)

Արագ—գիշ. 12 ժ. 28 ր., Գանձակ—գիշ. 5 ժ. 42 ր., Եւլախ—առաւ. 7 ժ. 19 ր., Բագու—ցեր. 2 ժ. 43 ր.։ Պօստ.—երեկ. 9 ժ. 41 ր., Գանձակ—գիշ. 4 ժ. 13 ր., Եւլախ—առ. 6 ժ. 27 ր., Բագու—ցեր. 5 ժ. 39 ր.։ Մարդատար—ցեր. 7 ժ. 53. ր., Գանձակ—ցեր. 2 ժ. 10 ր., Եւլախ—ցեր. 4 ժ. 21 ր., Բագու—գիշ. 1 ժ. 50 ր.։

ԲԱԹՈՒՄ (Գօրի, Միխայլօվօ, Ռիօն)

Մարդատար (№ 7).—առ. 10 ժ. 58 ր., Գօրի—ցեր. 1 ժ. 30 ր., Միխայլօվօ—ցեր. 2 ժ. 58 ր., Ռիօն—երեկ. 7 ժ. 21 ր., Բաթում—գիշ. 12 ժ. 10 ր.։ Պօստ.—առ. 9 ժ. 15 ր., Գօրի—ցեր. 11 ժ. 49 ր., Միխայլօվօ—ցեր. 1 ժ. 19 ր., Ռիօն—երեկ. 5 ժ. 47 ր., Բաթում—գիշ. 10 ժ. 45 ր.։ Մարդատար (№ 5)—գիշ. 11 ժ. 22 ր., Գօրի—գիշ. 1 ժ. 57 ր., Միխայլօվօ—գիշ. 3 ժ. 20 ր., Ռիօն—առ. 7 ժ. 41 ր., Բաթում—ցեր. 12 ժ. 27 ր.։

ԵՐԵՒԱՆ (Ալէքսանդրօպօլ)

Ապր.-մարդ.—ցեր. 3 ժ. 16 ր., Ալէքսանդրօպօլ—գիշ. 2 ժ. 30 ր., Երևան-Ուլուխ. առ. 8 ժ. 22 ր.։ Պօստ.—գիշ. 1 ժ. 5 ր., Ալէքսանդրօպօլ—ցեր. 11 ժ. 53 ր., Երևան—Ուլուխ.—ցեր. 5 ժ. 35 ր., Նախիջևան—գիշ. 12 ժ. 32 ր., Ջուլֆա—գիշ. 2 ժ. 35 ր.։

ԲԱԳՈՒԻՑ (Պետերբուրգի ժամանակով)

Մարդատար—առ. 4 ժ. արագ.—ցեր. 4 ժ. 4 ր.։ Պօստ.—ցեր. 11 ժ. 23 ր.։

ԲԱԹՈՒՄԻՑ—Մարդ.—առ. 10 ժ. 38 ր.։ Պօստ.—առ. 6 ժ. 49 ր.։ Մարդատ.—ցեր. 5 ժ. 46 ր.։

ԵՐԵՒԱՆ-ՈՒԼՈՒԽԱՆԼՈՒԻՑ — Պօստ.—առ. 1 ժ. 58 ր.։ Ապրանք.-մարդատար—գիշ. 1 ժ. 50 ր.։

ՋՈՒԼՖԱՅԻՑ—Պօստ. գիշ. 4 ժամին։ Մարդ.-ապրանք.—ցեր. 3 ժ. 21 ր.։

ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ — Պօստ.— 7 ժամին Մրդ.-ապրանք.—6 ժ. 58 ր.։

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան
5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց տ. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 100—81

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 100—81

ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ
Հրատարակութիւններ

	կ.
1. Վայրի կարապներ (սպառ.)	8
2. Առաջին վիշտ (սպառ.)	10
3. Անտառապահ (սպառ.)	12
4. Աշխէնն ու Մարգարիտը (սպառ.)	10
5. Աղքատի բախտը (սպառ.)	5
6. Գոհարիկն ու Աստղիկը (սպառ.)	10
7. Նելլօն և Պատրաշը (սպառ.)	10
8. Գիւղում (սպառ.)	20
9. Կենդանի՞ է արդեօք	8
10. Բարեկամներ (սպառ.)	12
11. Առակներ բնական պատմութ.	12
12. Մագնիս	12
13. Արջի պատմութիւնը. Գայլը	15
14. Ոգիներ	8
15. Թմփլիկը	12
16. Լերան աղջիկը (սպառ.)	20
17. Բու	12
18. Փոքրիկ Պարոյրի արկածները	15
19. Փիղ	8
20. Ռուբէնի զբաղմունքը	25
21. Որբ Աննան	12
22. Արցունք	15
23. Անձնազոհ մանուկ	10
24. Դարևոր կաղնին	6
25. Խրամատի եղերքին (1 գուն. պատկ.)	10
26. Լուսատտիկներ (4 գուն. պատկ.)	40

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին։
(28. 1. 9.) 3—3

Բացված է 1908 թ. անպայման կանխիկ բաժանորդագրութիւն

ԱՂԲԻՒՐ ԱՂԲԻՒՐԻ նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը։ ԱՂԲԻՒՐԸ իր ժառանգ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր։

ՏԱՐԱԶԸ ԱՂԲԻՒՐԻ հասունացած սաների ՏԱՐԱԶ խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը։ ՏԱՐԱԶԸ ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտված, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքված հայ անդամներ սնուցանել։

XXVI մանկական պատկերազարդ ամսագիր և XIX պատկերազարդ, երկշաբաթաթերթ Բաժանորդագրութիւն — Աղբիւր 3 ր. (արտասահման 5 ր.) Տարազ—6 ր. (արտասահման 10 ր.), Աղբիւր-Տարազ, յաւելուածներով 10 ր. (արտասահման 50 ֆր.)։ Տարազի առանձին №-ը 50 կ., Աղբիւր-Տարազ փղոսկրեայ թղթի վրա 100 ր.։

Խմբագրատունը՝ Թիֆլիս, Մադաթեան փող., տ. № 5, բաց է ամեն օր. (բացի կիրակի և տօն օրերից) առ. 10 ժ. մինչև 2-ը կէսօրից յետոյ։ Հասցէն՝ Тифлисъ, ред. Таразъ. Rédaction du journal Taraz. Տէլէֆօն № 282, Caucase, Tiflis.

Աղբիւր և Տարազ հանդէսները կը հրատարակվեն այնքան №№ և այն ծաւալով, որը կը թելադրէ վճարող բաժանորդների թիւը. 3—2

ՄԱՐՄԱՐԻ ԴՈՐԾԱՐԱՆ
ԱՆՋԵԼՕ ԱՆԴՐԷՕԼԵՏՏԻ
ԹԻՖԼԻՍ,
Միքայէլեան պրոսպ., 79

Վաճառքի կայ զանազան տեսակի պատրաստի արձանների ահագին պաշար չափաւոր գներով, ինչպէս և ընդունվում են պատուէրներ մարմարեայ և մօզաիկ աշխատանքների։
(Հ. Հ.) 10—9

ԺՈՂՈՎՐԴ. ԼՈՒՍԱՒՈՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Գարեգին Լևոնեանի
Թիֆլիսում
(ժամանակաւորապէս Յովնանեան դպրոցի շէնքի մէջ)
Երկու սեռի անձերի համար
Երկրորդ կիսամեակ՝ յունվար—մայիս
Պարապմունքները երեկոները՝ 5—7 ժ.

ՈՒՍԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐ. նկարչութիւն, գծագրութիւն, գեղագրութիւն, ձեռարուեստ, փորագրութիւն, քանդակագործութիւն, շքեղ ձեռագործ, հեռանկար (պերսպեկտիվա), գոյների և ստուերների տեսութիւն, գեղարուեստի պատմութիւն։ Քանդակագործութեան դասերի համար հրաւիրված է պ. Ա. Թաշճեան։
Յունվարից—մայիս վճարն է 25 ռուբ. կամ ամսական 5 ռուբ., դպրոցականների համար 15 ր. և 3 ր.։ Յաճախել ցանկացողները դիմելու են կուրսերի հիմնադրին՝
(29, 9, 12) Бебутовская, 12, առ. ժ. 10—12. 3—2

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
«ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻԹԻՄ»—„MESSAGERIES MARITIMES“

14/27 յունվարի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, „Crimée“ շոգենաւը, հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։
Տոմսակների վաճառումը ճանապարհորդների համար ժամանակաւորապէս դադարեցրած է, Բաթումից գնացողների դէմ Տաճկաստանում քարանթին նշանակվելու համար։
Ապրանքների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել՝ Ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, Նախկին Արծրունու պալէրէյում թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Գրասենեակը բաց է՝ 9—1 ժամը ցերեկվայ և 5—6-ը երեկոյեան ամեն օր, բացի կիրակի օրերից։ (Կ.) 1—1

Открыта подписка на 1908 годъ
НА ГАЗЕТУ
„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“
(XXXI-Й ГОДЪ ИЗДАНІЯ)

Газета будетъ выходить ежедневно, кромѣ дней послѣпраздничныхъ и понедѣльниковъ. Чтобы имѣть возможность своевременно доставлять газету городскимъ и особенно иногороднимъ подписчикамъ, контора изданія проситъ ЗАПИСАТЬСЯ НА ГАЗЕТУ СВОЕВРЕМЕННО, такъ какъ заготовка адресовъ г.г. подписчиковъ требуетъ немало времени.

Въ цѣляхъ привлеченія литературныхъ силъ для систематическаго снабженія нашей газеты разнообразнымъ матеріаломъ: беллетристикой, статьями по всѣмъ вопросамъ текущей политической и общественной жизни, науки, литературы и искусства, равно корреспонденціями изъ главнѣйшихъ городовъ Европы, редакція „Тифл. Листка“, благодаря соглашенію съ группой писателей, заручилась на 1908 г. сотрудничествомъ слѣдующихъ авторовъ: Леонидъ Андреевъ, В. А. Анзимировъ, С. Ауслендеръ, Alexander, Валентинъ Амфитеатровъ (Iunior), прив.-доц. Бачинскій, прив.-доц. А. Бернштейнъ, Александръ Блокъ, прив.-доц. Алексѣй Боровой, И. А. Бунинъ, Ю. А. Бунинъ, К. Бальмонтъ, И. А. Бѣлоусовъ, Андрей Бѣлый, Л. Вилькина, В. В. Вересаевъ, Максъ Волошинъ, А. Ворогниковъ, В. Высоцкій, Леонидъ Галичъ, D-r Ге, Сергѣй Глаголъ, Е. П. Гославскій, Сергѣй Городецкій, Б. Грифцовъ, Б. Диксъ, А. Діесперовъ, Борисъ Зайцевъ, В. Зоргенфрей, А. Кизеветтеръ, Н. Киселевъ, А. Кондратьевъ, П. Кожевниковъ. Ѳ. Ѳ. Кокошкинъ, С. Котляревскій, Н. Крашенинниковъ, А. Койранскій, В. Е. Кошарскій, Сергѣй Кречетовъ, Маркъ Криницкій, А. И. А. И. Купринъ, Е. Лундбергъ, В Линденбаумъ, Н. А. Морозовъ (шлиссельбуржецъ), Мирэ, И. И. Митропольскій, Муни, П. Н. Муратовъ, С. А. Муромцевъ (предсѣд. 1-й Государств. Думы), Иванъ Новиковъ, И. И. Нежлукто, П. Нилусъ, Нина Петровская, А. Печковскій, Борисъ Поповъ, С. Попичъ, М. К. Первухинъ, П. Поярковъ, Алексѣй Ремизовъ, Н. Русовъ, Сергѣй Соловьевъ, А. С. Серафимовичъ, С. Сергѣевъ-Ценскій, Скиталецъ, В. Стражевъ, Ѳ. Сологубъ, Е. Тарасовъ, Н. Телешевъ, Н. И. Тимковскій, А. Федоровъ, С. В. Филипповъ, В. Ходасевичъ, Юрій Череда, Георгій Чулковъ, А. Чапыгинъ, С. Шумаковъ, Е. Н. Чириковъ, Н. Н. Щепкинъ, С. Юшкевичъ, Екат. Эккъ, Конст. Эрбергъ, Е. Янтаревъ, П. М. Ярцевъ, прив.-доц Ященко и др.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

СЪ ДОСТАВКОЙ ВЪ ТИФЛИСЪ:
На 12 мѣс.—5 руб., на 6 м.—3 руб.,
на 3 мѣс.—1 р. 75 к.

СЪ ПЕРЕС. ВЪ ДРУГІЕ ГОРОДА:
На 12 мѣс.—7 р. на 6 мѣс.— 4 р.
на 3 мѣс.—2 р. 50 к.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ на любой срокъ, но только съ 1 числа каждаго мѣсяца, исключительно въ конторѣ изданія, Головинскій проспектъ, № 15. 3—3

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіаповъ съ С-ми. Большая Ванкская т. д. Семинаріи № 3